# 1. Փափուռի




*Նանայ, նանայ, փափուռի,*
*Նանայ, նանայ, փափուռի,*
*Փափուռի ջան, փափուռի,*
*Փափուռի ջան, փափուռի:*

*Ջուր է գալիս էն սարից,*
*Նանայ, նանայ, փափուռի,*
*Կաթում է մարմար քարից,*
*Նանայ, նանայ, փափուռի:*

*Արև ելավ էն սարից,*
*Նանայ, նանայ, փափուռի,*
*Կաքավ կանչեց էն քարից,*
*Նանայ, նանայ, փափուռի:*

*Խնձոր ես ծառի վրա,*
*Նանայ, նանայ, փափուռի,*
*Ծաղիկ ես սարի վրա,*
*Նանայ, նանայ, փափուռի:*

*Անուշ տաղ ասող բլբուլ,*
*Նանայ, նանայ, փափուռի,*
*Կանգնել ես քարի վրա,*
*Նանայ, նանայ, փափուռի,*

*Մտա բլբուլի բաղը,*
*Նանայ, նանայ, փափուռի,*
*Երգեցի անուշ տաղը,*
*Նանայ, նանայ, փափուռի:*

# 2. Արև, արև




Արև, արև դուս արի,
Հերն ու մերդ էկել են,
Թուր ու թվանք բերել են,
Գոմշի ոտին տվել են,
Թե դուս կգաս, քե՛վ կտամ,
Թե դուս չես գա, շան ու գիլի փա՛յ կանեմ:

* ազատ խոսելով (պարտադիր չէ ճիշտ նոտաներով ասել)

# 3. Արեգակ


Ա - րև, ա - րև, ե՛կ, ե՛կ, պի - պի քա - րին վե՛ր եկ,
սև, սև ամ - պեր, հե - ռա - ցեք, ա - րե - վին ճամ - փա տը - վեք:
Թո - ղեք՝ նա գա մեզ մոտ, նը - րա լույ - սին ենք կա - րոտ,
կար - միր ա - րև, ե՛կ, ե՛կ, նախ - շուն քա - րին վե՛ր եկ:
Ա - րևն հաղ - թեց ամ - պե - րին, շող - քը գը - ցեց սա - րե - րին,
պի - պի քա - րը, տե՜ս, տե՜ս, պըս - պը - ղում է ու - կու պես:
Սի - րուն ա - րև, միշտ ե՛կ, պի - պի քա - րին վե՛ր եկ:

*Արև, արև, ե՛կ, ե՛կ,*

*Ջիվի քարին վե՛ր եկ,*

*Սև-սև ամպեր հեռացեք,*

*Արևին ճամփա տըվեք:*

*Թողեք՝ նա գա մեզ մոտ,*

*Նըրա լույսին ենք կարոտ,*

*Կարմիր արև, ե՛կ, ե՛կ,*

*Նախշուն քարին վե՛ր եկ:*

*Արևն հաղթեց ամպերին,*

*Շողքը գըցեց սարերին,*

*Ջիվի քարը տե՛ս, տե՛ս.*

*Պըսպըղում է ոսկու պես:*

*Սիրուն արև, միշտ ե՛կ,*

*Ջիվի քարին վե՛ր եկ:*

# 4. Ծափիկ ծափիկ




*Ծափիկ ծափիկ ծիրանի,*
*Կարմիր խնձոր նըմանի,*
*Ձյունե ճերմակ թաթիկներ,*
*Կուցեն ոսկի մատանի:*

*Ծափիկ ծափիկ ծիրանի,*
*Ծառ-վառ վարդի նըմանի,*
*Ոսկե դերձան մազերը,*
*Հովը թել-թել կըտանի:*

# 5. Զըմփիկ կըմփիկ




*Զըմփիկ, կըմփիկ կարին է,*
*Իկտա շուշան դարին է,*
*Նանեն գընաց աղյանի,*
*Աղյան չէղավ, խոտ էղավ,*
*Խոտի միջին ծիտ էղավ,*
*Ծիտը թռավ գերանին,*
*Կանաչ խոտը բերանին:*

# 6. Ջնգվնգալեն հարսն էկավ




*Ջընգվընգալեն հարսն էկավ,*
*Ուստ ճարեցինք, պասն էկավ:*

*Գասի Բաղեշ, բերի նուռ,*
*Տարա դըրի ժամու դուռ,*
*Ջընգվընգալեն հարսն էկավ,*
*Ուստ ճարեցինք, պասն էկավ:*

*Պաղ աղբըրից ջուր կիգա,*
*Չիր ու չամիչ հետ կիգա,*
*Ջընգվընգալեն հարսն էկավ,*
*Ուստ ճարեցինք, պասն էկավ:*

*- Քո խոսք ու կրուց ի՞նչ ա:*
*- Իմ ուկած շեկ չամիչ ա:*
*Ջընգվընգալեն հարսն էկավ,*
*Ուստ ճարեցինք, պասն էկավ:*

# 7. Արև, արև




*Արև, արև, արի դուս,*
*Քեզ բերել ենք աչքի լուս,*
*Քո քուրիկը՝ լուսընկան,*
*Բերեց չամիչ մեկ աման,*
*Ամպը եկավ մութ արավ,*
*Չամիչն աչքերես կորավ:*
*Բայ երեսըդ, արեգակ,*
*Մի բուռ չամիչ քեզ կըտանք...*
*Օ՜խ, արևին խաբեցինք,*
*Օ՜խ, արևին խաբեցինք,*
*Ամպի տակեն հանեցինք,*
*Օ՜խ, արևին խաբեցինք:*

# 8. Այ արևը




*Հենց որ ծագի արևը,*
*Այ արևը, արևը,*
*Քեզի ղրկեմ բարևը,*
*Ո՛ւմ տամ տանի բարևը:*
*Այ արև, արևը,*
*Ո՛ւմ տամ տանի բարևը:*

*Արև ելավ էն սարից,*
*Այ արևը, արևը,*
*Կաքավ կանչեց էն քարից,*
*Ո՛ւմ տամ տանի բարևը:*
*Այ արևը, արևը,*
*Ո՛ւմ տամ տանի բարևը:*

*Պուճուր թըփին լեն տերև,*
*Պաչեմ ունքերիդ վերև,*
*Արի ցավիս ճար արա,*
*Հենց դու ըլիս կյանք - արև:*

# 9. Մուշանի հայ մուշանի




*Ձուն էր էգե սարերուն,*

*Հա նըրա նինա, հա, նինա,*

*Հալեր, թափեր քարերուն,*

*Հա նըրա նինա, հա, նինա,*

*Խառներ էլման գերերուն,*

*Հա նըրա նինա, հա, նինա,*

*Էլնեմ աղբոր թևերուն,*

*Հա նըրա նինա, հա, նինա:*

*Մըշո սարեր մըշուշ էր,*

*Ուր հողն ու ջուր անուշ էր:*

*Բաղեղին կասեն բիթլիս,*

*Բարակ մեջկունք, էրկեն վիզ,*

*Բարակ մեջկունք, էրկեն վիզ,*

*Գընա, էկո, բըռնե պիս:*

# 10. Թագվորի մեր




*Թագվո՛րի մեր, դո՛ւս արի,*
*Տես քեզ ինչե՞ր ենք բերե:*
*Թագվո՛րի մեր, դո՛ւս արի,*
*Քեզ նուշ, անուշ ենք բերե:*

*Վարդ ու ծաղիկ ենք բերե:*
*Մեխակ, շուշան ենք բերե:*
*Քե տախտ ավլող ենք բերե:*
*Կովեր կթող ենք բերե:*
*Բեր զընայող ենք բերե:*
*Լըվայք արող ենք բերե:*
*Սարի կաքավ ենք բերե:*
*Սարի եղնիկ ենք բերե:*
*Կեր-խում անող ենք բերե:*
*Քեզ պարդարող ենք բերե:*

# 11. Հախչա, հախչա




- Հախչա, հուխչա,
- Հախչա, հուխչա.
- Աղջի՝
- Հարսի,
- Հարսը՝
- Թարս ի,
- Մերը՝
- Մերս ի,
- Հերը՝
- Հերս ի,
- Քուրը՝
- Քուրս ի,
- Պապը՝
- Թարս ի,
- Թոռը՝
- Թոռ ի:
- Հախչա, հուխչա,
- Հախչա, հուխչա.
- Հարսի՝
- Աղջի,
- Սիրտը՝
- Մխ չի,
- Բողկը՝
- Աղ չի,
- Սերը՝
- Խաղ չի,
- Փեսեն՝
- Կաղ չի,
- Բեղը՝
- Կախ չի,
- Սիրտը՝
- Պաղ չի,
- Առնի՝
- Փախչի,
- Ճամփով՝
- Բաղչի,
- Հե՜ջան,
- Կաղ չի,
- Հե՜ջան,
- Փախչի:
- Հախչա, հուխչա,
- Հախչա, հուխչա:

# 12. Էկեք ծեծենք




- Էկեք ծեծենք տախ ու ալխտոր:
- Ինչո՞վ ծեծենք:
- Ոտքով ծեծենք.

Ոտքով, ոտքով, ոտքով ծեծենք:

- Էկեք ծեծենք տախ ու ալխտոր:
- Ինչո՞վ ծեծենք:
- Ձեռքով ծեծենք.

Ձեռքով, ձեռքով, ձեռքով ծեծենք:

- Էկեք ծեծենք տախ ու ալխտոր:
- Ինչո՞վ ծեծենք:
- Գըլխով ծեծենք.

Գըլխով, գըլխով, գըլխով ծեծենք:

- Էկեք ծեծենք տախ ու ալխտոր:
- Ինչո՞վ ծեծենք:
- Քըթով ծեծենք.

Քըթով, քըթով, քըթով ծեծենք:

# 13. Հայ պըռնգա




Հայ պընգա, պընգա, պընգա,
Հայ պընգա, պընգա, պընգա:

Բըռան կատուն՝ դարբնի տուն,
Հայ պընգա, պընգա, պընգա,
Դարբնի կըռան կարկ գըլխուն,
Հայ պընգա, պընգա, պընգա,
Ասաց՝ էլ չըգաս մեր տուն,
Հայ պընգա, պընգա, պընգա,
Հայ պընգա, պընգա, պընգա:

Բըռան կատուն, չաղ կատուն,
Հայ պընգա, պընգա, պընգա,
Փախավ, մըտավ Սըրբկա տուն,
Հայ պընգա, պընգա, պընգա,
Բըռան կատուն հարիսա,
Հայ պընգա, պընգա, պընգա,
Սըրբիկն ուտի, կըլավնա.
Հայ պընգա, պընգա, պընգա,
Հայ պընգա, պընգա, պընգա:

Սըրբիկ նազե-նազ կանի,
Հայ պընգա, պընգա, պընգա,
Ծամերն իտև սազ կանի,
Հայ պընգա, պընգա, պընգա,
Հայ պընգա, պընգա, պընգա,
Հայ պընգա, պընգա, պընգա:

# 14. Քուրիկ Ջիպի




*Քուրիկ Ջիպի, կայնա խաղա, լե, լե, լե, աշե,*
*Քուրիկ Ջիպի, նստի խաղա, լե, լե, լե, աշե,*
*Քուրիկ Ջիպի, ճախրակ մանի, լե, լե, լե, աշե,*
*Քուրիկ Ջիպի, առճկան մանի, լե, լե, լե, աշե,*
*Քուրիկ Ջիպի, ալյուր մաղի, լե, լե, լե, աշե,*
*Քուրիկ Ջիպի, խմոր շաղի, լե, լե, լե, աշե,*
*Քուրիկ Ջիպի, թոնիր վառի, լե, լե, լե, աշե,*
*Քուրիկ Ջիպի, հացը թըխի, լե, լե, լե, աշե,*
*Քուրիկ Ջիպի, լըվայք արա, լե, լե, լե, աշե,*
*Քուրիկ Ջիպի, գըլուխ լվա, լե, լե, լե, աշե,*
*Քուրիկ Ջիպի, մազեր սանդրի, լե, լե, լե, աշե,*
*Քուրիկ Ջիպի, աչքեր դեղի, լե, լե, լե, աշե,*
*Քուրիկ Ջիպի, տըղոնց դաղի, լե, լե, լե, աշե:*

# 15. Դան, դան, դանեդան

*Չափավոր և կատակով*




*Դան, դան, դանեդան,*
*Ձի հավ մը կեր, կոլոտ էր,*
*Դան, դան, դանեդան,*
*Փողցեփողոց ման կու գեր,*
*Դան, դան, դանեդան,*
*Ինչ որ գըտներ՝ կուլ կու տեր,*
*Դան, դան, դանեդան:*

*Պուտուկ փըլավ էփեցի,*
*Կոլոտ հավուն կերցուցի:*
*- Կոլոտ հավ, ձի ձու ածա:*
*Տարա տըվի դարբընին.*
*- Դարբին, ձի դանակ մը տուր:*
*Դանակ տըվի հովըվուն.*
*- Հովիվ, ձի մաքի մը տուր:*
*Մաքին տըվի Աստծուն.*
*- Աստված, ձի ախպեր մը տուր,*
*- Ախպեր, ախպեր, ես քեզ շուն,*
*- Ի՞նչխ բարձե քու իշուն:*
*- Խընգընե խինե, ապըրշում:*

*Մի օձ տեսա ճըլպըտուն,*
*Փախավ, մըտավ Սալբու տուն:*
*Սալբի նըստեր սաց կանա,*
*Գըլուխ կորեր, նաց կանա,*
*Հավերն էկան՝ քըշ կանա:*

# 16. Ջըմփիկ, կըմփիկ կարին ա




*Ջըմփիկ, կըմփիկ կարին ա,*
*Իկտա շուշան դարին ա,*
*Մամեն գնայ աղյանի,*
*Աղյան չէլավ, խոտ էլավ,*
*Խոտի տակին ծիտ ելավ,*
*Ծիտը թըռավ գերանին,*
*Կանաչ խոտը բերանին:*

*Գընայի սարը սընձի,*
*Ոտքըս դիպավ մի քընձի,*
*Հարսներին քաղել տըվի,*
*Տղերքին դաստել տըվի,*
*Վարդ-մանուշակ հարսները,*
*Տանձ ու խնձոր տըղերքը:*

# 17. Հոպ, թըռի




*Հոպ, թըռի, հոպ, հոպ, թըռի,*
*Հայկո ջան,*
*Շուտ թըռի, շախով թըռի,*
*Վարդ ջան:*

*Խնձոր ես ծառի վրա,*
*Հայկո ջան,*
*Ծաղիկ ես սարի վրա,*
*Վարդ ջան,*
*Հոպ, թըռի, հոպ, հոպ, թըռի,*
*Հայկո ջան,*
*Շուտ թըռի, շախով թըռի,*
*Վարդ ջան:*

*Անուշ տաղ ասող կաքավ,*
*Հայկո ջան,*
*Կանգնել ես քարի վրա,*
*Վարդ ջան,*
*Հոպ, թըռի, հոպ, հոպ, թըռի,*
*Հայկո ջան,*
*Շուտ թըռի, շախով թըռի,*
*Վարդ ջան:*

*Ախպեր ունեմ՝ գառնարած,*
*Հայկո ջան,*
*Պարի միջին շվարած,*
*Վարդ ջան,*
*Հոպ, թըռի, հոպ, հոպ, թըռի,*
*Հայկո ջան,*
*Շուտ թըռի, շախով թըռի,*
*Վարդ ջան:*

## 18. Ոսպ ճարեցինք




*Ոսպ ճարեցինք, պասն եկավ,*
*Տա՜յ, տա՜յ, նա՜յ, նա՜յ, նա՜յ,*
*Զընգըլընգալեն հարսն էկավ,*
*Տա՜յ, տա՜յ, նա՜յ, նա՜յ, նա՜յ,*
*Մեծ տունը լեն ու էրգեն,*
*Տա՜յ, տա՜յ, նա՜յ, նա՜յ, նա՜յ,*
*Ձոր պար պարի, ալ Գուրգեն,*
*Տա՜յ, տա՜յ, նա՜յ, նա՜յ, նա՜յ,*

*Պաղ աղբրից ջուր կիգա,*
*Չիր ու չամիչ հետ կիգա,*
*- Քո խոսք ու կրից ի՞նչա*
*- Իմ ուկած շեկ չամիչա:*

## 19. Լեն թուփ ու կանաչ տերևիկ




*Լեն թուփ ու կանաչ տերևիկ,*
*Բեր պագնեմ կաչիդ վերևիկ:*

*Գացինք վըր Հալբա սարուն,*
*Արն նըստեր վըր քարուն,*
*Արն նըստեր վըր քարուն,*
*Գիլեր կաշուն, ըկ գարուն.*
*Աշուն լե դառներ գարուն,*
*Ձիսի չէներ էրերուն:*

*Լեն թուփ ու կանաչ տերևիկ,*
*Բեր պագնեմ կաչիդ վերևիկ:*

*Գացինք ըդ Մըշու դիմաց*
*Տեսանք դըռներ կիսաբաց,*
*Մըտանք, առնենք թաժա հաց,*
*Աններ բոջին վիս ի խած:*

*Լեն թուփ ու կանաչ տերևիկ,*
*Բեր պագնեմ կաչիդ վերևիկ:*

# 20. Ձներիկ խաբեյին




*Ձներիկ խաբեյին կուռիկ մի գինով,*
*Ձմերիկ խաբեյին մատիկ մի հինով,*
*Ձաղբեր խաբեյին պոլատ մի ձիով,*
*Ձաղջիկ խաբեյին հազար մի բարով:*

# 21. Հոպ, շորորա




*Հոպ, շորորա, շորորա,*
*Հոպ, շորորա, Շողեր ջան:*

*Հոպ, շորորա, հովն անուշ,*
*Հոպ, շորորա, շորորա,*
*Դու խորոտիկ, պազն անուշ,*
*Հոպ, շորորա, շորորա,*
*Քելա, արի՝ քեզ տամ նուշ,*
*Հոպ, շորորա, Շողեր ջան:*

*Շողեր նըստավ նախշ կաներ,*
*Հավեր էկան, «քի՛շ» կաներ,*
*Պառավն էկավ, «վո՛ւյ» կաներ:*

*Կաքավն էլավ վըռնարին,*
*Գլուխ հանեց դեմ քարին,*
*Արև շողաց Շողերին:*

# 22. Հոփ, հոփ, հոփ ըլնի




*Հոփ, հոփ, հոփ ըլնի,*
*Աղբերս թագավոր ըլնի,*
*Հոփ, հոփ, հոփ ըլնի,*
*Աղբորս տունը լի ըլնի:*

*Հոփ, հոփ, հոփ ըլնի,*
*Անեմ՝ աղբերս ինչ ըլնի,*
*Հոփ, հոփ, հոփ ըլնի,*
*Կանաչ արեգակ ըլնի:*

*Հոփ, հոփ, հոփ ըլնի,*
*Մեր տունը թող ծով ըլնի,*
*Հոփ, հոփ, հոփ ըլնի,*
*Աղբերս բախտավոր ըլնի:*

# 23. Նանարի նայ




*Նանարի, նանարի, նանարի նայ,*
*Նանարի նայ, նանարի նայ:*
*Համբարձման երկուշաբթին*
*Առա փոյխն ու գերանդին,*
*Գայի մըտա մըջ արտին,*
*Ծորեցի, ծոր թըփեցի,*
*Մանդրիկ-մանդրիկ խորմեցի,*
*Խորուն-խորմի դըրեցի:*

*Կեմիկ չեղավ՝ կապեցի,*
*Ծամթել կեմիկ արեցի.*
*Սելիկ չեղավ՝ բարձեցի,*
*Մեջկունք սելիկ արեցի,*
*Եկնուկ չեղավ՝ լըծեցի,*
*Կաքավ եկնուկ արեցի:*

*Հոտաղ չեղավ՝ քըշեցի,*
*Ճնճուղ հոտաղ դըրեցի,*
*Խարկան չեղավ՝ քըշեցի,*
*Սև օձ խարկան արեցի.*
*Կեսգիշերին քըշեցի,*
*Քըրոջ դըռնով ընկուցի:*

# 24. Ծաղ էրա

I տարբերակ




II տարբերակ




*Ծաղ էրա, հայ, ծաղ էրա,*
*Ծաղ էրա, հայ, ծաղ էրա.*
*Խնձոր թաղիմ, համ էրա,*
*Խնձոր թաղիմ, համ էրա,*

*Ծաղ էրա, հայ, ծաղ էրա,*
*Խորոտ, շիլեն ծաղ էրա:*
*Ամպեր էրայ, հով էրայ,*
*Անձրև էրայ, ծով էրայ.*
*Ծաղ էրա, հայ, ծաղ էրա,*
*Խորոտ, շիլեն ծաղ էրա:*
*- Արև էրայ, լուս էրայ,*
*- Բարև էրայ, շող էրայ:*
*Ծաղ էրա, հայ, ծաղ էրա,*
*Խորոտ, շիլեն ծաղ էրա:*

*- Աղջի, քու անուն ի՞նչ է:*
*- Տղա, քու ուզած ի՞նչ է:*
*Ծաղ էրա, հայ, ծաղ էրա,*
*Խորոտ, շիլեն ծաղ էրա:*
*Էրթամ քաղաք, չիր բերեմ,*
*Մեկ ինձի աչքով էրա.*
*Ծաղ էրա, հայ, ծաղ էրա,*
*Խորոտ, շիլեն ծաղ էրա:*

*Ծաղ էրա, հայ, ծաղ էրա,*
*Քու պագ ձի հալալ էրա,*
*Ծաղ էրա, հայ, ծաղ էրա,*
*Խորոտ, շիլեն ծաղ էրա:*

# 25. Տոնածառ




*Տոնածառ ջան, տոնածառ,*

*Ինչ սիրուն ես ու պայծառ,*

*Էս ի՞նչ լավն է, էս ի՞նչ լավն է,*

*Չորս կողմը լույս ու փայլ է:*

*Կարմիր աստղը գագաթին,*

*Ծառի տակ Ձմեռ պապին,*

*Էս ինչ լավն է, էս ինչ լավն է,*

*Չորս կողմը լույս ու փայլ է:*

# 26.Գնացեք տեսեք՝ ով է կերել այծը




*Գնացեք տեսեք՝ ով է կերել այծը.*
*Գնացին տեսան՝ գայլն է կերել այծը:*
*Գայլն ու այծը,*
*Այծն ու գայլը,*
*Ձեզ՝ բարեկենդան,*
*Մեզ՝ բարի պատիկ:*
*Գնացեք տեսեք՝ ով է կերել գայլը.*
*Գնացին տեսան՝ արջն է կերել գայլը:*
*Արջն ու գայլը,*
*Գայլն ու այծը,*
*Ձեզ՝ բարեկենդան,*
*Մեզ՝ բարի պատիկ:*

*Գնացեք տեսեք՝ ով է կերել արջը.*
*Գնացին տեսան՝ թուրն է կերել արջը:*
*Թուրն ու արջը,*
*Արջն ու գայլը,*
*Գայլն ու այծը,*
*Ձեզ՝ բարեկենդան,*
*Մեզ՝ բարի պատիկ:*
*Գնացեք տեսեք՝ ով է կերել թուրը.*
*Գնացին տեսան՝ ժանգն է կերել թուրը:*
*Ժանգն ու թուրը,*
*Թուրն ու արջը,*
*Արջն ու գայլը,*
*Գայլն ու այծը*
*Ձեզ՝ բարեկենդան,*
*Մեզ՝ բարի Ջատիկ:*

*Գնացեք տեսեք՝ ով է կերել ժանգը.*
*Գնացին տեսան՝ հողն է կերել ժանգը:*
*Հողն ու ժանգը,*
*Ժանգն ու թուրը,*
*Թուրն ու արջը,*
*Արջն ու գայլը,*
*Գայլն ու այծը,*
*Ձեզ՝ բարեկենդան,*
*Մեզ՝ բարի պատիկ:*

* *այս տակտերը հետագա տներում, խոսքերին համապատասխան փոխհաջորդելով կրկնվում և աստիճանաբար արագանում են*

# 27. Այբ, բեն, գիմ




*Այբ, բեն, գիմ,*
*Դա, եչ, զա,*
*Այբ, բեն, գիմ,*
*Դա, եչ, զա,*
*Դա, եչ, զա:*

*Է, ըթ, թո,*
*Ժե, ինի, լյուն,*
*Է, ըթ, թո,*
*Ժե, ինի, լյուն,*
*Ժե, ինի, լյուն:*

*Խե, ծա, կե,*
*Հո, ձա, ղատ,*
*Խե, ծա, կե,*
*Հո, ձա, ղատ,*
*Հո, ձա, ղատ:*

*Ճե, մեն, յի (հի),*
*Նու, շա, ո,*
*Ճե, մեն, յի (հի),*
*Նու, շա, ո,*
*Նու, շա, ո:*

*Չա, պե, ջե,*
*Ռա, սե, վեվ,*
*Չա, պե, ջե,*
*Ռա, սե, վեվ,*
*Ռա, սե, վեվ,*

*Տյուն, րե, ցո,*
*Վյուն, փյուր, քե,*
*Տյուն, րե, ցո,*
*Վյուն, փյուր, քե,*
*Վյուն, փյուր, քե:*

# 28. Ջըպիկ, վըպիկ




*Ջըպիկ, վըպիկ, կարին ա,*
*Իգդա շուշան դարին ա:*

*Շուշան գընաց աղյանի,*
*Աղյան չըկար՝ չորցել էր,*
*Ջըրի ճամփեն մոռցել էր,*
*Անձրև չեկավ էս տարին,*
*Չորցավ ցորեն ու գարին:*
*Ջըպիկ, վըպիկ, կարին ա,*
*Իգդա շուշան դարին ա:*
*Գոռգոռոցն ընկավ վերև,*
*Լըվաց կանաչ ու տերև,*
*Անձրևն էկավ, գոլ էրավ,*
*Ցորեն արտը բոլ էրավ:*
*Ջըպիկ, վըպիկ, կարին ա,*
*Իգդա շուշան դարին ա:*
*Թելիկ-մելիկ ման էկա,*
*Քեփի հանդերում գըտա,*
*Մերիկըս թըխեց գաթա,*
*Ինձի չի տա, քեց կըտա:*
*Ջըպիկ, վըպիկ, կարին ա,*
*Իգդա շուշան դարին ա:*

# 29. Իլիլի, դիլիլի
## (կթի երգ)




*Հինգ էծ ունեմ ուլերով,*
*Իլիլի, դիլիլի,*
*Կաթ կըկըթեմ դույլերով,*
*Իլիլի, դիլիլի,*
*Մեր կըչափեմ կալ չափով,*
*Իլիլի, դիլիլի,*
*Եղ կըհանեմ լվի տըկով,*
*Իլիլի, դիլիլի:*

# 30. Այ իմ գընդակ







*Այ իմ գնդակ, իմ գնդակ,*
*Կանաչ-կարմիր կապուտակ,*
*Թըռիր վերև, իջիր ցած,*
*Չալին մընա պարմացած:*

*Գըլոր, գըլոր, գըլորվիր,*
*Խոտերի մեջ մոլորվիր,*
*Չալին տեսնի խըտըտի,*
*Խունջիկ-մունջիկ պըտըտի*

# 31. Վեր, հա վեր - վեր




Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Վերն, որ ասես՝ էնիկ է,
Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Վերն, որ հավնիս՝ էնիկ է:

Աչքեր ունես՝ նըռան հատ,
Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Կապտածաղիկ կըտավհատ,
Վերն, որ ասես էնիկ է,
Էրնեկ թե մերըդ բերեր,
Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Քեզ պես աղջիկ քանիմ հատ,
Վերն որ հավնիս՝ էնիկ է:

Ծաղիկ ես փընջի միջին,
Անուշ կաթ՝ սընձի միջին,
Մեղրահամ անուշ կորիզ,
Դեղին թուրինջի միջին:

Արի էրթանք կալերը,
Կանչենք անուշ խաղերը:
Արիք խաղանք հարի լուս,
Էգվան կէնեն մեղի դուս:

# 32. Տամբուրեն




Նըխշուն թել, նըխշուն թել,
Իմ նըխշուն թել տամբուրեն,
Ինչ կէնիմ, ինչ չէնիմ,
Ձեն չհանե ուր հուրեն։

Համք իջավ երկընքուց,
Նըխշուն թելեր ուր կըտուց,
Հայ էնեց, հույ էնեց,
Իմ տամբուրեն հանգչըցուց։

Ճիվ ու ճիվ ճընճղիկ,
Թըռավ մեծ առվի պըռկից,
Ծըլվըլաց, ճըվճըվաց,
Տամբուրեն թևով լըվաց։

Լուսընկա, լուսընկա,
Իմ տամբուրեն կըշնկա,
Տառ մը տես, բառ մը տես,
Իմ տամբուրին ճար մը տես։

Ախ, նանե, արտուտիկ,
Իջավ կալեր գողտուտիկ,
Դես նայեց, դեն նայեց,
Կերավ պապու ակըռտիք։

Արտուտիկ, խատուտիկ,
Էկավ, դարձավ իմ քուրիկ,
Տառ բերեց, բառ բերեց,
Իմ տամբուրին ճար բերեց։

Ախ, նանե, արտուտիկ,
Իջավ կալեր գողտուտիկ,
Դես նայեց, դեն նայեց,
Կերավ պապու ակըռտիք։

Արտուտիկ, խատուտիկ,
Էկավ, դարձավ իմ քուրիկ,
Տառ բերեց, բառ բերեց,
Իմ տամբուրին ճար բերեց։

Նըխշուն թել, նըխշուն թել,
Իմ նըխշուն թել տամբուրեն,
Կըկնգա, կըշնկա,
Ուր անուշ ձենն է հուրեն։

Նըստիմ հով, կըթիմ կով,
Զարկե կըմփիկ, պատիմ ծով,
Համ լողամ, համ շողամ,
Համ պիմ տամբուրեն գովամ։

# 33. Ճընճղկնին շատ պըկտըկնին




*Ճընճղկնին շատ պըկտըկնին*
*Տանարը, նանարը, նանար, նար.*
*Լապըստկնին, բայց աչվընին,*
*Տանարը, նանարը, նանար, նար:*
*Աղվըսնին էրկենպոչիր,*
*Գելանին սուր ակռընիր,*
*Կաքավնին նախշուն թևիր,*
*Ջահիկնին սև թեբուրնիր,*
*Լագլագնին էրկեն վըզիր,*
*Կռունկնին էրկեն ոտնիր,*
*Կատվընին սուր աչվընիր:*

# 34. Տրինո




*Տրինո.*
*Չիչոն տունն է, Տըրինո,*
*Ասեք՝ դուս գա,Տըրինո,*
*Քիչըմ հայ տա, Տըրինո,*
*Թալիմ չանթես, Տըրինո,*
*Ընկնեմ ճամփես, Տըրինո,*
*Ասեն՝ ի՞նչ է, Տըրինո,*
*Ասեմ՝ բողկ է, Տըրինո,*
*Քիչըմ ինձ տաս, Տըրինո,*
*Էրթամ խոտի, Տըրինո,*
*Վախնամ՛ հոտի, Տըրինո:*

# 35. Լուսնակ պատին դիպել ա




*Լուսնակ պատին դիպել ա,*
*Լուսնակ պատին դիպել ա,*
*Լուսնակ պատին դիպել ա,*
*Բակն արևով լըցվել ա:*

*Էս գիշեր ես դուրս ելա,*
*Լուսնակ պատին դիպել ա,*
*Լուսնակն անուշ կըյոլա,*
*Բակն արևով լըցվել ա:*
*Կըյոլա Հալվա սարին,*
*Լուսնակ պատին դիպել ա,*
*Կըկաթա մարմար քարին,*
*Բակն արևով լըցվել ա:*

*Լուսնակն անուշ բոլոր ա,*
*Մեջ թուխ ամպին մոլոր ա,*
*Եղանք սարեր, քաղցըր նուշ,*
*Բոբիկ ոտներ կէլներ փուշ:*

*Լուսնակ պատին դիպել ա,*
*Լուսնակ պատին դիպել ա,*
*Լուսնակ պատին դիպել ա,*
*Բակն արևով լցվել ա:*

# 36. Գառնիկն ու մայրը




- *Ինչի՞ կուլաս դու, գառնիկ:*
- *Խիստ ծեծ կերա ես, մայրիկ...*
- *Քեզ ո՞վ ծեծեց, իմ գառնիկ:*
- *Մի չար պառավ, իմ մայրիկ...*
- *Ինչի՞ ծեծեց քեզ, գառնիկ:*
- *Ծառի տակն էի, մայրիկ:*
- *Ինչո՞վ ծեծեց քեզ, գառնիկ:*
- *Մի մեծ փետով, իմ մայրիկ:*
- *Ինչի՞դ կպրկեց, իմ գառնիկ:*
- *Ոտիկներիս, իմ մայրիկ:*
- *Ինչպե՞ս լացիր, իմ գառնիկ:*
- *«Մե՜, մե՜, մե՜, մե՜»,- իմ մայրիկ:*

# 37. Հե՜յ, իմ Նապան, իմ Նապան




*Հե՜յ, իմ Նապան, իմ Նապան,*
*Չէ՜, իմ Նապան, իմ Նապան:*

*Լուսնի լուսնակը ես եմ,*
*Հե՜յ, իմ Նապան, իմ Նապան,*
*Ծովի ձըկնակը ես եմ,*
*Չէ՜, իմ Նապան, իմ Նապան:*
*Գիշերով փախչող աղջիկ,*
*Հե՜յ, իմ Նապան, իմ Նապան,*
*Հետիդ ընկերը ես եմ,*
*Չէ՜, իմ Նապան, իմ Նապան:*

*Արտի միջակը խոտ է,*
*Ծաղիկը խընկահոտ է,*
*Էրթանք ծաղիկ քաղելու,*
*Քանի Համբարձում մոտ է:*

# 38. Հո՜յ, Նապան

## (պարզ օրինակ)




*Հո՜յ, Նապան իմ, Նապան իմ,*
*Ջա՜ն, Նապան իմ, Նապան իմ,*
*Նապան, դու բարով եկար,*
*Կանաչ սարերով եկար,*
*Խոր-խոր ձորերով եկար:*
*Գարնան սիրուն ծաղիկ ես,*
*Հո՜յ, Նապան իմ, Նապան իմ,*
*Ինձ համար աղունիկ ես,*
*Ջա՜ն, Նապան իմ, Նապան իմ,*
*Գըլխիս վըրով պըտտիտ տուր,*
*Հո՜յ, Նապան իմ, Նապան իմ,*
*Նախշուն թև թիթեռնիկ ես,*
*Ջա՜ն, Նապան իմ, Նապան իմ,*
*Նապան դու բարով եկար,*
*Կանաչ սարերով եկար,*
*Խոր-խոր ձորերով եկար:*

# 39. Սար, սար




*Սար, սար,*
*Ես սարերի ծաղիկն եմ,*
*Ջա՜ն, ջա՜ն,*
*Ես Լևոնի քուրիկն եմ:*

*Սար, սար,*
*Ժամի դռնեն դուրս ելա,*
*Ջա՜ն, ջա՜ն,*
*Արևի պես լուս էլա:*

*Սար, սար,*
*Էն սարին սար չեմ ասի,*
*Ջա՜ն, ջա՜ն,*
*Վատ տղին լավ չեմ ասի:*

*Սար, սար,*
*Հայ եմ թըխել՝ փըրփըրի,*
*Ջա՜ն, ջա՜ն,*
*Վատ խոստը քըրքըրի:*

*Սար, սար,*
*Ես սարերի ծաղիկն եմ,*
*Ջա՜ն, ջա՜ն,*
*Ես Լևոնի քուրիկն եմ:*

# 40. Իմ աղբերը գառումն ա




*Լե, լե, գիտե, լե, լե,*
*Լե, լե, գիտե, լե, լե,*

*Իմ աղբերը գառումն ա,*
*Լե, լե, գիտե, լե, լե,*
*Լե, լե, գիտե, լե, լե,*
*Շվին գոտկածալումն ա,*
*Լե, լե, գիտե, լե, լե,*
*Լե, լե, գիտե, լե, լե,*

*Կանչի, կանչի, աղբեր ջան,*
*Քիրդ Լոռվա սարումն ա:*
*Արեգնակին թեր աղբեր,*
*Շաքար կոտրեմ, կեր, աղբեր:*

# 41. Հո՛յ նարե




*Հո՛յ նարե, հո՛յ նարե, ճախրակի ու փըշատ էր,*

*Հո՛յ նարե, հո՛յ նարե, ճախրակ մանող շիմշատ էր,*

*Հո՛յ նարե, հո՛յ նարե, ճախրակի ու շըլոր էր,*

*Հո՛յ նարե, հո՛յ նարե, ճախրակ մանող կըլոր էր,*

*Հո՛յ նարե, հո՛յ նարե, ճախրակի ու սալոր էր,*

*Հո՛յ նարե, հո՛յ նարե, ճախրակի ու բարդի էր,*

*Հո՛յ նարե, հո՛յ նարե, մանողի հոտ վարդի էր:*

# 42. Ճլորթու երգ




Հե - րը խա - փեմ թասմ ա - րա - ղով, մե - րը խա - փեմ մա - տըմ խի - նով,
ախ - պեր խա - փեմ պո - լատ ձի - ով, աղ - ջիկ բե - րեմ հա - կար բա - րով:
Թու է - նա պու - ճախ, թու է - նա պու - ճախ, մեր քա - վո - րանց
մեղ - րի պու - ճախ, շեն կե - նա իմ հոր օ - ջախ,
մեր հոր օ - ջախ: Թու է - նա պա - րան, թու է - նա պա - րան,
ա - մեն տա - րան, պխ չը - տա - րան: Քյուֆ - ֆը, քյուֆ,
մեր տը - ղեն, կախ - վե - րի ծա - ռի ճը - ղեն,
ծառ չի - նա - րի, հե - րիկն էր, չի - նար բա - ժիկ
մե - րիկն էր, փուն - ջըմ ռե - հան, քե - ռիկն էր:

*Քյուֆը, քյուֆ, դարա, դարա,*
*Ես էլա բերդի բարա.*
*Իմ ախպեր վեր էն բերդին,*
*Ոսկի թուր վեր էն թնին,*
*Կերթա խաղա դեմ լուսնակին,*
*Լուսնակ տըփեց մեջ երեսին։*

*Թու էնա պուճախ, թու էնա պուճախ,*
*Մեր քավորանց մեղրի պուճախ,*
*Շեն կենա իմ հոր օջախ։*

*Քյուֆը, քյուֆ, կերթամ-կուգամ,*
*Իմ ախպոր կընիկ ճարեմ.*
*Հո՞ւստ ճարեմ, հո՞ւստ չըճարեմ,*
*Վարագա սարեն ճարեմ։*
*Դուռը տըփեմ մարմար քարով,*
*Մըտնեմ ներս պարդարանքով,*
*Հերը խաբեմ թասմ արաղով,*
*Մերը խաբեմ մատըմ խինով,*
*Ախպեր խաբեմ պոլատ ձիով,*
*Աղջիկ բերեմ հապար բարով։*

*Թու էնա պուճախ, թու էնա պուճախ,*
*Մեր քավորանց մեղրի պուճախ,*
*Շեն կենա իմ հոր օջախ։*
*Թուէնա պարան, թու էնա պարան,*
*Ամեն տարան, պիս չըտարան։*

*Քյուֆը, քյուֆ, մեր էն տըղեն,*
*Կախվերի ծառի ճըղեն,*
*Ծառ չինարի, հերիկն էր,*
*Չինար բաժիկ, մերիկն էր,*
*Ձուղըմ ռեհան, քեռիքն էր։*

# 43. Ճախըրկու երգ




*Ճախըրկու ոտ փըշատ է, խանե,*
*Ճախրակ մանող շիմշատ է, ջանե:*
*Ճախըրկու ոտ գյո տանձ է, խանե,*
*Թնքիդ տակ նըխշուն բարձ է, ջանե:*
*Ճախըրկու ոտ գյո փուշ է, խանե,*
*Աղջի ծամերդ օլոր է, ջանե:*

# 44. Գիլի գիլ




*Գիլի գիլ, գիլն է տարե,*
*Փեշըդ կըրակն է վառե:*
*Ջաղչի կըտուրը տարթ է,*
*Գոտիկըս լիքը վարդ է,*
*Թելիկ-մելիկ աղբերըս,*
*Գոտիկըս շարած վարդ է:*
*Գիլի գիլ, գիլն է տարե,*
*Փեշըդ կըրակն է վառե:*

*Իմ ախպերը կըռնել է,*
*Վարդը ձեռին բըռնել է,*
*Ամեն ծառին՝ մի փըշատ,*
*Իմ աղպոր արևը շատ:*

# 45. Կռունկ ջան




*Կըռունկ ջան, արի, արի,*
*Կըռունկ ծափ տու ու թըռի:*

*Կըռունկ ձախ թևին արի,*
*Կըռունկ ջան, արի, արի,*
*Կըռունկ աջ թևին արի,*
*Կըռունկ ծափ տու ու թըռի:*
*Կըռունկ սարերով արի,*
*Կըռունկ ջան, արի, արի,*
*Գընա արի, ման արի,*
*Կըռունկ ծափ տու ու թըռի:*

*Ցոլա ամպերի տակին,*
*Ծաղիկ - ծառների տակին,*
*Կըռունկ, գարնան արևին,*
*Էկար մըտար մեր այգին:*

*Արևը դարի վըրեն,*
*Մամուռը քարի վըրեն,*
*Էրկու կըռունկ եմ տեսել,*
*Արագած սարի վըրեն:*

# 46. Մանդրիկ թփիկ ըռեհան




*Սանդրիկ թըփիկ ըռեհան,*
*Էլնինք սարերը սեյրան.*
*Հոպ-հոպ, նախըրչու տըղա,*
*Քաշվի, նախրչու տըղա:*

*Էլնինք սարերը արոտ,*
*Հոպըռ, նախըրչու տըղա,*
*Տեսնենք՝ ում քուրն է խորոտ,*
*Հոպըռ, նախըրչու տըղա,*
*Քաշվի, նախըրչու տըղա,*

*Օսկին ճակտիս շարել եմ,*
*Վարդ ու մեխակ ճարել եմ,*
*Հոպ-հոպ, նախըրչու տըղա,*
*Քաշվի, նախըրչու տըղա,*
*Սարեր ձորեր ման արի,*
*Հոպըռ, նախըրչու տըղա,*
*Արնի հետ տուն արի,*
*Հոպըռ, նախըրչու տըղա,*
*Քաշվի, նախըրչու տըղա:*

# 47. Տո, տղա, տըղա




Տո տղա, տըղա, մեր մըշակ,
Արի քաղենք մանուշակ,
Տանենք, պարկենք մեր դոշակ,
Նըստենք վըրեն իշխանակ,
Ծամեր հուսենք շըրջանակ,
Գըցենք մեջքին աղջկնակ.
Տո տղա, տըղա, մեր մըշակ,
Արի քաղենք մանուշակ։
Կակվմանա ձորեն եմ,
Վարդ այգու խընձորեն եմ,
Վեր կըյթռնեմ, ծաղիկ եմ,
Թեյթվահոգի աղջիկ եմ,
Սերկևիլի ծաղիկ եմ,
Խորոտ լաճու մատնիկ եմ,
Տո տղա, տըղա, մեր մըշակ,
Արի քաղենք մանուշակ։

# 48. Հովվի անկողինը




*Սարի լանջն է մահճակալ, մահճակալ.*
*- Ուխա՜յ, ուխա՜յ, ինչ փափուկ է:*

*Չեչոտ քարը գլխակալ, գլխակալ.*
*- Ուխա՜յ, ուխա՜յ, ինչ կակուղ է:*

*Մի հին կարպետ ուսերին, ուսերին.*
*- Ուխա՜յ, ուխա՜յ, ինչ նախշուն է:*

*Այս է հովնի անկողին, անկողին.*
*- Ուխա՜յ, ուխա՜յ, ինչ տաքուկ է:*

*Երբ անձրև է կաթկըթում, կաթկըթում.*
*- Ուխա՜յ, ուխա՜յ, ինչ լավըն է:*

*Եվ կարպետը թըխկթըխկում, թըխկթըխկում.*
*- Ուխա՜յ, ուխա՜յ, ձենն անուշ է:*

*Հովիվն անուշ քընի մեջ, կարպետում, կարպետում.*
*- Ուխա՜յ, ուխա՜յ, ինչ փափուկ է:*

*Քաղցըր երազ է տեսնում, տեսնում.*
*- Ուխա՜յ, ուխա՜յ, ինչ քաղցր է:*

*Եվ խընդում է, ծիծաղում, ծիծաղում.*
*- Ուխա՜յ, ուխա՜յ, սիրուն հովիվ:*

# 49. Բասեն բարի




*Բասեն բարի, Բասեն բարի,*
*Հայ Նուբարի, ջան Նուբարի,*
*Աղջի, արի, բըռնե, պարը,*
*Հայ Նուբարի, ջան Նուբարի, Նուբարի:*

*Երկու գնա, երեք արի,*
*Հայ դոմբարի, ջան դոմբարի,*
*Տղա, արի, բըռնե, պարի,*
*Հայ դոմբարի, ջան դոմբարի, դոմբարի:*

*Արի՝ խաղանք էս դոմբարին,*
*Բասեն բարի, Բասեն բարի,*
*Ինչքան ուրախ է էս տարին,*
*Հայ դոմբարի, ջան դոմբարի, դոմբարի:*

# 50. Ջան գառնուկ

*Սիրալիր, քիչ աշխույժ*



*Կապեմ վըզիդ զընգ-զանգակ,*
*Դե, հե, զընգը, զընգը,*
*Դե, հե, ջան,*
*Օրը տաք է, արեգակ,*
*Դե, հե, զընգը, զընգը,*
*Ջան, գառնուկ:*

*Դաշտը բոլոր կանաչ խոտ,*
*Դե, հե, զընգը, զընգը,*
*Դե, հե, ջան,*
*Արի տանեմ քեզ արոտ,*
*Դե, հե, զընգը, զընգը,*
*Ջան, գառնուկ:*

*Ջուր կուգա վերին սարեն,*
*Սարն օլորելեն,*
*Կըթափվի մարմար քարեն՝*
*Կաթ-կաթ ծորելեն:*

*Դաշտը բոլոր կանաչ խոտ,*
*Դե, հե, զընգը, զընգը,*
*Դե, հե, ջան,*
*Արի տանեմ քեզ արոտ,*
*Դե, հե, զընգը, զընգը,*
*Ջան, գառնուկ:*

# 51. Աղվես


Կայտառ
Աղ - վես ե - կավ լան - ջիկ, ման - ջիկ, ու - ներ վա - զան,
կար - ճիկ մար - ճիկ: Վա՜յ, իմ չա - լիկ, չալ մա - լա - լիկ,
խոր - խո - րո - տիկ, չալ - մա - տո - տիկ, տըմ - բը - լա - ճա - կատ,
տըռ - ճիկ մըռ - ճիկ, փափ - լիկ ճը - տեր, վո՜ւյ, վո՜ւյ,
Ճի կե - ցու - ցի ա - նուշ կու - տիկ, վո՜ւյ, վո՜ւյ:

Աղվես եկավ լանջիկ-մանջիկ,
Ոտներ վայան, կարճիկ-կարճիկ:

Վա՛յ, իմ չալիկ, չալմալալիկ,
Խոր-խորոտիկ, չալմատոտիկ,
Տըմբըլաճակատ, տըռճիկ-մըռճիկ,
Փափլիկ ճըտեր, վո՛ւյ, վո՛ւյ,
Չի կերցուցի անուշ կուտիկ,
վո՛ւյ, վո՛ւյ:

Աղվես նըստեր դարու գըլխուն,
Աչքեր գըցեր չաղ վառըկուն:

Վա՛յ, իմ չալիկ, չալմալալիկ,
Խոր-խորոտիկ, չալմատոտիկ,
Տըմբըլաճակատ, տըռճիկ-մըռճիկ,
Փափլիկ ճըտեր, վո՛ւյ, վո՛ւյ,
Չի կերցուցի անուշ կուտիկ,
վո՛ւյ, վո՛ւյ:

Աղվես կասի իմ տեղ նեղ ի,
Հավու ճըտեր փորուս դեղ ի:

Վա՛յ, իմ չալիկ, չալմալալիկ,
Խոր-խորոտիկ, չալմատոտիկ,
Տըմբըլաճակատ, տըռճիկ-մըռճիկ,
Փափլիկ ճըտեր, վո՛ւյ, վո՛ւյ,
Չի կերցուցի անուշ կուտիկ,
վո՛ւյ, վո՛ւյ:

Աղվես գընաց մըտավ ջաղաց,
Թաթեր վերուց, մի բոլ խաղաց:

Վա՛յ, իմ չալիկ, չալմալալիկ,
Խոր-խորոտիկ, չալմատոտիկ,
Տըմբըլաճակատ, տըռճիկ-մըռճիկ,
Փափլիկ ճըտեր, վո՛ւյ, վո՛ւյ,
Չի կերցուցի անուշ կուտիկ,
վո՛ւյ, վո՛ւյ:

Տըղա, Ավագ, հասի, մարագ,
Ես քե կիտամ մեղր ու կարագ:

Վա՛յ, իմ չալիկ, չալմալալիկ,
Խոր-խորոտիկ, չալմատոտիկ,
Տըմբըլաճակատ, տըռճիկ-մըռճիկ,
Փափլիկ ճըտեր, վո՛ւյ, վո՛ւյ,
Չի կերցուցի անուշ կուտիկ,
վո՛ւյ, վո՛ւյ:

Ճուտըմ ունեմ ի հիշատակ,
Աղվես տանի, մընամ դատարկ:

Վա՛յ, իմ չալիկ, չալմալալիկ,
Խոր-խորոտիկ, չալմատոտիկ,
Տըմբըլաճակատ, տըռճիկ-մըռճիկ,
Փափլիկ ճըտեր, վո՛ւյ, վո՛ւյ,
Չի կերցուցի անուշ կուտիկ,
վո՛ւյ, վո՛ւյ:

Աղվես եկավ տափիկ-մափիկ,
Քանց մեր կատուն՝ սուսիկ-փուսիկ:

Վա՛յ, իմ չալիկ, չալմալալիկ,
Խոր-խորոտիկ, չալմատոտիկ,
Տըմբըլաճակատ, տըռճիկ-մըռճիկ,
Փափլիկ ճըտեր, վո՛ւյ, վո՛ւյ,
Չի կերցուցի անուշ կուտիկ,
վո՛ւյ, վո՛ւյ:

Եկավ մըտավ մեր մարագիկ,
Հավու ճըտեր արավ խորտիկ:

Վա՛յ, իմ չալիկ, չալմալալիկ,
Խոր-խորոտիկ, չալմատոտիկ,
Տըմբըլաճակատ, տըռճիկ-մըռճիկ,
Փափլիկ ճըտեր, վո՛ւյ, վո՛ւյ,
Չի կերցուցի անուշ կուտիկ,
վո՛ւյ, վո՛ւյ:

# 52. Լեպո-հո, լե, լե




*Լեպո-հո, լե, լե,*
*Լեպո-հո, լե, լե,*
*Լեպո-հո, լե:*
*Իմ ախպերը հանդումն ա,*
*Շըվին գոռկածալումն ա:*
*Լեպո-հո, լե, լե,*
*Լեպո-հո, լե, լե,*
*Լեպո-հո, լե:*
*Ախպեր ջան, շըվիդ ածա,*
*Քուրըդ Լոռվա սարումն ա:*
*Լեպո-հո, լե, լե,*
*Լեպո-հո, լե, լե,*
*Լեպո-հո, լե:*
*Իմ ախպեր ծառան տակին,*
*Սաղմոսը կըռան տակին,*
*Սաղմոսը ջուր ա արել,*
*Լեպուն բըլբուլ ա դառել:*

# 53. Հոլը հոլը




Ջուր կիգա բարձըր սարեն,
Հոլը, հոլը, հոլը, հոլը, քեփի վարկ,
Կըթափի մարմար քարեն,
Աղջիկ տըղան քաբոր վարկ:

Սարի ծաղիկ ծերե ծեր,
Հոլը, հոլը, հոլը, հոլը, քեփի վարկ,
Աղբեր, գընանք մեկետեղ,
Աղջիկ տըղան քաբոր վարկ:
Որ գապանը վրա տա,
Հոլը, հոլը, հոլը, հոլը, քեփի վարկ,
Գըլուխս տամ գըլխիդ տեղ,
Աղջիկ տըղան քաբոր վարկ:

Երկանքըն աղի վրա,
Հոլը, հոլը, հոլը, հոլը, քեփի վարկ,
Կանաչը թաղի վրա,
Աղջիկ տըղան քաբոր վարկ:
Ես պըստըլիկ մի հավք եմ,
Հոլը, հոլը, հոլը, հոլը, քեփի վարկ,
Իմ հերանց ծառի վրա,
Աղջիկ տըղան քաբոր վարկ:

# 54. Հոյ Մայրամ




*Հոյ Մայրամ, Մայրամա,*
*Հոյ Մայրամա, Մայրամա:*
*Մայրամ, արի էս պարը,*
*Հոյ Մայրամ, Մայրամա,*
*Մեզ համար կասեմ խաղը,*
*Հոյ Մայրամա, Մայրամա:*

*Ծաղիկ ունիմ, ալա է,*
*Ալա չէ, ալվալա է,*
*Մայրամ, Մայրամ քուր ունիմ,*
*Նռան հատիկ, լալա է:*

*Լուսնակը բոլորել է,*
*Ամպի մեջ մոլորել է,*
*Մայրամի պարի համար*
*Ջուռնաչույց խըռովել է:*

# 55. Պըռակ, պըռակ




*Պռակ-պռակ*
*Տիկնի պռակ.*
*Փեսեն եկավ՝*
*Լիքը քռակ,*
*Տիրնանինե, տիրնանինե,*
*Ջուռնի ձենը*
*Գեղով մին է...*
*Բոյը՝ չինար,*
*Մեջքին՝ քամար,*
*Աչքերը՝ ծով,*
*Ունքը կամար,*
*Տիրնանինե, տիրնանինե,*
*Ջուռնի ձենը*
*Գեղով մին է...*

# 56. Դալի լոք լո




*Ջաղչի դըռնով անյա ես, լո,*
*Դալի լոք լո, դալի, լո,*
*Կոտ մի կորեկ գողյա ես,*
*Դալի լոք լո, դալի, լո,*
*Ջաղչի թուխղիրը մուխ է, լո,*
*Դալի լոք լո, դալի, լո,*
*Իմ տեսած աղջիկ թուխ է, լո,*
*Դալի լոք լո, դալի, լո:*

*Ջաղչի դուռը ջուխտըմ դոչ, լո,*
*Մեկը փընջած, մեկը՝ ոչ, լո*
*Ջաղչի բոլոր բարդու ծառ, լո,*
*Ջաղչի քարերը խելառ, լո:*

*Ջաղչի բաղարջն համով է, լո,*
*Աղջիկ օսկե ծամով է, լո,*
*Ջաղչի թուխղիրը մուխ է, լո,*
*Իմ տեսած աղջիկ թուխ է, լ:*

# 57. Շատախի սանդի երգ




*- Սանդիկ ուռ էր,*
*- Ծեծող ծուռ էր,*
*- Խանե, խանե,*
*- Խանե, խանե:*

*- Սանդիկ դուլ էր,*
*- Ծեծող կույ էր,*
*- Խանե, խանե,*
*- Խանե, խանե:*

*- Սանդիկ հընտի,*
*- Ծեծող ջընտի,*
*- Խանե, խանե,*
*- Խանե, խանե:*

*- Սանդիկ կախմախ,*
*- Ծեծող չախմախ,*
*- Խանե, խանե,*
*- Խանե, խանե:*

# 58. Հավանգ սանդի երգ




Սանդի բոլոր կըլոր էր,
Շատ ջուր լըցրի՝ խըմոր էր.
Հո՛փ արա, հո՛փ արա,
Հո՛փ արա, թո՛փ արա:

Ցորեն ծեծինք՝ դան էլավ,
Հարիսեն համով էլավ.
Հո՛փ արա, հո՛փ արա,
Հո՛փ արա, թո՛փ արա:

Դե, դան ծեծենք, թե ձավար,
Սանդը «դընգ» կանենք հավար.
Հո՛փ արա, հո՛փ արա,
Հո՛փ արա, թո՛փ արա:

Դանը ծեծենք հարիսա,
Տակինը հավու միս ա.
Հո՛փ արա, հո՛փ արա,
Հո՛փ արա, թո՛փ արա:

Դան քամուն տու, թեփ անի,
Մաղի, ճըլըլեկ հանի.
Հո՛փ արա, հո՛փ արա,
Հո՛փ արա, թո՛փ արա:

# 59. Փայտե ձիուկ




Տրո՛փ, տրո՛փ, տրո՛փ,
Վազե, ձիուկ, հո՛պ,
Քարեն վեր,
Դարեն վեր,
Սիրուն ձիուկ,
Դեպի լեռ.
Տրո՛փ, տրո՛փ, տրո՛փ,
Հո՛պ, հո՛պ, հոպ:

Թա՛փ, թա՛փ, թա՛փ,
Գետեն անցիր ափ,
Մի վազեր,
Մի կոտրեր,
Կարմիր ձիուկ,
Իմ ոտներ.
Թա՛փ, թա՛փ, թա՛փ,
Ա՛փ, ա՛փ, ա՛փ:

Պո՛ւ, պո՛ւ, պո՛ւ,
Այժմ կեցիր դու,
Ու արի,
Կեր գարի,
Գիրուկ ձիուկ,
Քաջարի.
Պո՛ւ, պո՛ւ, պո՛ւ,
Դո՛ւ, դո՛ւ, դո՛ւ:

# 60. Հոյ նար

(գյոնդ)

*Արագ և եռանդուն*




*Հո՛յ նար, ջանըմ նար,*
*Հո՛յ նար, ջանըմ նար,*
*Մե հավըմ կար, վիկն էրկեն էր,*
*Հո՛յ նար, ջանըմ նար,*

*Հո՛յ նար, ջանըմ նար,*
*Հո՛յ նար, ջանըմ նար,*
*Ճըտերն իտև տասնմեկ էր,*
*Հո՛յ նար, ջանըմ նար:*

*Աղվեսն ի տվեն կըմըկմըկեր,*
*Աղվեսն ասայ՝ իմ տեղ նեղ ի,*
*Հավու ճըտեր փորիս դեղ ի:*
*Աղվես նըստեր վեր տախտակին,*
*Պոչն ի տընկե դեհ տան տակին:*
*Աղվես էկավ տափիկ-մափիկ,*
*Քանց մեր կատուն կանափըտիկ,*
*Հավու ճըտերն արայ խորտիկ:*

# 61. Աղջկեր, պար բռնեցեք




Աղջըկեք, պար բըռնեցեք,
Արմիկի երես գովեցեք:
Ա՜յ երես, շարմաղ երես,
Դու մեկ չըթողնես սև երես:
Աղջըկեք, պար բըռնեցեք,
Արմիկի աչեր գովեցեք:
Ա՜յ աչեր, սիրուն աչեր,
Արևի պես փայլուն աչեր:
Աղջըկեք, պար բըռնեցեք,
Արմիկի կըռներ գովեցեք:
Ա՜յ կռներ, ուժեղ կռներ,
Դուք կըշարժեք մեծ-մեծ լեռներ:
Աղջըկեք, պար բըռնեցեք,
Արմիկի հասակ գովեցեք:
Ա՜յ հասակ, բարձրհասակ,
Քեզ կվայելե դափնեպսակ:

# 62. Հայկանուշ




Էսօր նորը նորել ա,
Հայկանուշ,
Նորել ա, բոլորել ա,
Վարդանուշ:

Ես մի պուճուր երկաթ եմ,
Հայկանուշ,
Երդիկի ուր մըկրատ եմ,
Վարդանուշ:

Կայնել ես պատի տակը,
Հայկանուշ,
Կըցոլա մատնուստ ակը,
Վարդանուշ:

Եկա, ձեր դըռնով անցա,
Հայկանուշ,
Չասիր՝ արի մեր բակը,
Վարդանուշ:

Հայկուշը խոս է, խոս է,
Հայկանուշ,
Վարդուշի թուշը փոս է,
Վարդանուշ:
Աստված սիրող, բան չասե,
Հայկանուշ,
Մեկ ու ճար է, ափսոս է,
Վարդանուշ:

# 63. Թաժա Նուբար




*Ախ, Նուբար, Նուբար, Նուբար,*
*Ախը, Նուբար, թաժա Նուբար.*
*Սանո սարեր քահրուբար,*
*Ախը, Նուբար, Նուբար, Նուբար:*

*Սանու կ՚ելներ մալուլ մուխ,*
*Ախ, Նուբար, Նուբար, Նուբար,*
*Աղջիկ կախեց ճութ ու պուխ,*
*Ախ, Նուբար, Նուբար, Նուբար,*
*Խորթեր կ՚էնեն ախ ու վուխ,*
*Ախ, Նուբար, Նուբար, Նուբար:*

*Խնձոր թալեմ, արի տար,*
*Երկինք կապել է կամար,*
*Կառնենք վիրուր, կ՚ելնենք սար:*
*Ձուն էր էգե սարերուն,*
*Հալեր թափել քարերուն,*
*Խառներ էլման գետերուն:*

# 64. Տանըմը նա

(կեմցիների պարը)




*Լուսնակն անուշ, բոլոր ա,*
*Տանըմ-նա, նանըմ-նա, նա,*
*Մըջ թուխ ամպին մոլոր ա,*
*Տանըմ-նա, նանըմ-նա, նա,*
*Եղանք սարեր քաղցըր նուշ,*
*Վա՜յ, անուշ, անուշ, անուշ,*
*Բոբիկ ոտներ կ’էլներ փուշ,*
*Վա՜յ, անուշ, անուշ, անուշ:*

*Ուստի՞ կուգաս դու հուշիկ,*
*Ոտք խըլթվի կակուղ փըշիկ.*
*Թողնիս՝ պագնեմ կակուղ թուշ,*
*Կարմիր երես, պագն անուշ:*

# 65. Կաքըվներ, կաքըվներ *




*Կաքավներ, կաքավներ,*
*Քելեք՝ էրթանք բոլոր խաչին,*
*Կաքավներ, կաքավներ,*
*Քելեք՝ էրթանք բոլոր խաչին,*
*Կաքավներ, կաքավներ,*
*-Վեր-վեր թըռնենք վըր կանաչին,*
*Կաքավներ, կաքավներ,*
*Ոտներ մըրսի, փայթեն լաչին,*
*Կաքավներ, կաքավներ:*

*Ճիլա շապիկ ծալ-ծալ արեք,*
*Կաքավներ, կաքավներ,*
*Ճիլա շապիկ ծալ-ծալ արեք,*
*Կաքավներ, կաքավներ,*
*Կարմիկ էրես պուտ-պուտ արեք,*
*Կաքավներ, կաքավներ,*
*Կարմիկ էրես պուտ-պուտ արեք,*
*Կաքավներ, կաքավներ:*

*Ելեք տեսեք՝ ո՞ր կաքավ ջոջ,*
*Կաքավներ, կաքավներ,*
*Բըռնենք, տանենք մեր աներոջ,*
*Կաքավներ, կաքավներ:*

* *երգել «կաքավներ»*

# 66. Քոչարի




*Սարեն իջար ձիավոր,*
*Լայ տըմը, լայ տըմը,*
*Լայ տըմը, լայ տըմը, քոչարի,*
*Արծիվի պես թևավոր,*
*Հայ, ախպեր ջան,*
*Հայ, ախպեր ջան, տուն արի:*
*Արծիվի թևից արև,*
*Լայ տըմը, լայ տըմը,*
*Լայ տըմը, լայ տըմը, քոչարի,*
*Դու խաղ կանչի ձևավոր,*
*Հայ, ախպեր ջան,*
*Հայ, ախպեր ջան, տուն արի:*

*Սարեն իջավ ձիավոր,*
*Լայ տըմը, լայ տըմը,*
*Լայ տըմը, լայ տըմը, քոչարի,*
*Մեր դուռն է կամարավոր,*
*Ջան, ախպեր ջան,*
*Ջան, ախպեր ջան, տուն արի:*
*Էրնեկ կուտամ էն օրվան,*
*Լայ տըմը, լայ տըմը,*
*Լայ տըմը, լայ տըմը, քոչարի,*
*Ախպեր կանգնի թագավոր,*
*Ջան, ախպեր ջան,*
*Ջան, ախպեր ջան, տուն արի:*

# 67. Քելե, քելե, նազ մի անի Սաթօ ջան




*Խնձոր ես ծառի վրա,*
*Քելե, քելե, նազ մի՛ անի, Սաթօ ջան,*
*Ծաղիկ ես սարի վրա,*
*Էլի, էլի, հագի-կապի, Սաթօ ջան:*
*Անուշ տաղ առ տխակ,*
*Քելե, քելե, նազ մի՛ անի, Սաթօ ջան,*
*Կայնել ես քարի վրա,*
*Էլի, էլի, հագի-կապի, Սաթօ ջան:*

*Արևն առավ գերանին,*
*Շողը գցեց մերանին,*
*Զույգ աղունիկ դուրս թըռան,*
*Կանաչ խոտը բերանին:*

# 68. Աղվես գընաց մըտավ ջաղաց




*Աղվես գընաց մըտավ ջաղաց,*
*Թաթեր վերուց մի բոլ խաղաց:*
*Հարայ, աղվես, պարոն աղվես,*
*Աշխարհքի մեջ չըկա քու պես:*

*Մի կոտ ու կես կորեկ աղաց,*
*Էն էլ շալակն առավ գընաց:*

*Աղվես կերավ գեղի հավեր,*
*Փարվեց տըվավ վերի կալեր:*

# 69. Գառնուկն ու մայրը




- Ինչու՛ կուլաս դու, գառնիկ:
- Խիստ ծեծ կերա ես, մայրիկ:
- Քեզ ո՛վ ծեծեց, իմ գառնիկ:
- Մի կախարդ պառավ կնիկ:
- Ինչու՛ ծեծեց քեզ, գառնիկ:
- Ծառի տակն էի, մայրիկ:
- Ինչո՛վ ծեծեց քեզ, գառնիկ:
- Մի մեծ փայտով, իմ մայրիկ:
- Ո՛ր տեղիդ զարկեց, գառնիկ:
- Տոտիկներիս, իմ մայրիկ:
- Ինչպե՛ս լայիր դու, գառնիկ:
- Մէ, մէ, մէ, մէ, իմ մայրիկ:

# 70. Եկեք ծեծենք տոխն ու սըխտոր




*Եկենք ծեծենք տոխն ի սըխտոր,*
*Կանաչ գըխտոր, ջուխտ մանանեխ,*
*Ինչո՞վ ծեծենք տոխն ի սըխտոր,*
*Կանաչ գըխտոր, ջուխդ մանանեխ:*

*Ոտքով ծեծենք տոխն ի սըխտոր,*
*Կանաչ գըխտոր, ջուխդ մանանեխ,*
*Ոտքով ծեծենք տոխն ի սըխտոր,*
*Ոտքով, ոտքով, ոտքով ծեծենք:*

*Ձեռով ծեծենք տոխն ի սըխտոր,*
*Կանաչ գըխտոր, ջուխդ մանանեխ,*
*Ձեռով ծեծենք տոխն ի սըխտոր,*
*Ձեռով, ճեռքով, ճեռքով ծեծենք:*

*Գըլխով ծեծենք տոխն ի սըխտոր,*
*Կանաչ գըխտոր, ջուխդ մանանեխ,*
*Գըլխով ծեծենք տոխն ի սըխտոր,*
*Գըլխով, գըլխով, գըլխով ծեծենք:*

*Քըթով ծեծենք տոխն ի սըխտոր,*
*Կանաչ գըխտոր, ջուխդ մանանեխ,*
*Քըթով ծեծենք տոխն ի սըխտոր,*
*Քըթով, քըթով, քըթով ծեծենք:*

*Փորով ծեծենք տոխն ի սըխտոր,*
*Կանաչ գըխտոր, ջուխդ մանանեխ,*
*Փորով ծեծենք տոխն ի սըխտոր,*
*Փորով, փորով, փորով ծեծենք:*

# 71. Արև կենե, շուք կենե




Նա, նա, նա,

Արև կենե, շուք կենե,

Նա, նա, նա,

Մուշամպան տերև կենե.

Նա, նա, նա,

Գայեք ըսեք էղբորըս,

Նա, նա, նա,

Քուրըդ շատ բարև կենե:

# 72. Հանիկ նինար




օղ - ներ կո - ղրի քիս - նա քար: Հա - նիկ նի - նար
է նի - նար, Ջա - նիկ նի - նար է նի - նար:
Նու - րին, նու - րին է - կեր է,
շա - լե շա - պիկ հա - քեր է:
Նու - րին, նու - րին, ինչ կու - զիս:
կը - թան կո - վույ յեղ կու - զիմ,
չալ հա - վույ հավ - կիթ կու - զիմ,
եր - կըն - քույ ամ - պեր կու - զիմ,
ամ - պե - րույ անձ - րև կու - զիմ,
որ մըր ու - զած տա մը - զի,
ան - ձրև իջ - նի վըր ձը - զի:
Ախ, նի - նար, ջան նի - նար, հա- նիկ նի - նար է նի - նար,
ջա - նիկ նի - նար է նի - նար: Ով չը - թըռ - նա փի - ղա պար,
օղ - ներ կո - ղրի քիս - նա քար: Հա - նիկ նի - նար է նի - նար,
ջա - նիկ նի - նար է նի - նար:

*Հանիկ նինար է նինար,*
*Ջանիկ նինար է նինար,*
*Ով չըթըռնա պիղա պար,*
*Օղներ կողրի քիմնա քար:**
*Ախ, նինար, ջան նինար,*
*Հանիկ նինար է նինար,*
*Ջանիկ նինար է նինար:*

*- Ախպեր, ախպեր, իմ նըխշուն,*
*- Ի՞նչ իս բարձիր քո իշուն:*
*- Խունկ, հինա ու աբրըշում:***
*- Վի՞ր կտանիս:*
*- Բըլեյին:*
*- Բըլեյ ետև սարերուն,*
*Բուրդ կըգըլե գիլերուն,*
*Թել կըմանե հավքերուն,*
*Շոր կըկարե ճըժերուն:*

*Նուրին, նուրին էկեր է,*
*Շալե շապիկ հաքեր է:*
*- Նուրին, նուրին, ինչ կուզիս:*
*- Կըթան կովուց յեղ կուզիմ,*
*Չաղ հավուց հավկիթ կուզիմ,*
*Երկընքուց ամպեր կուզիմ,*
*Ամպերուց անձրև կուզիմ,*
*Որ մըր ուկած տա մըկի,*
*Անձրև իջնի վըր ձըկի:*

---

* *քինա քար - քարին դիպչել*
** *աբրշում - մետաքս*

# 73. Հայր մեր




*Հա՛յր մեր,*
*Տո՛ւր մեզ, տո՛ւր քո շընորհ*
*Լի ու լի ամեն օր,*
*Հա՛յր մեր,*
*Կյա՛նք տուր մեր հայրիկին,*
*Կյա՛նք տուր մեր մայրիկին,*
*Հա՛յր մեր,*
*Մեզ պահե քո աջով,*
*Մեզ օրհնե Սուրբ խաչով,*
*Հա՛յր մեր,*
*Դու պահապան մեր:*

# 74. Թագվորի մեր, դուս արի




*Թագվորի մեր, դուս արի,*
*Տես քե ինչե՞ր ենք բերել.*
*Թագվորի մեր, դուս արի,*
*Քե ջուր բերող ենք բերել:*

*Թագվորի մեր, դուս արի,*
*Տես քե ինչե՞ր ենք բերել.*
*Թագվորի մեր, դուս արի,*
*Քե կով կըթող ենք բերել:*

*Թագվորի մեր, դուս արի,*
*Տես քե ինչե՞ր ենք բերել.*
*Թագվորի մեր, դուս արի,*
*Քե թախտ ավլող ենք բերել:*

*Թագվորի մեր, դուս արի,*
*Տես քե ինչե՞ր ենք բերել.*
*Թագվորի մեր, դուս արի,*
*Քե գլուխ դըմբող ենք բերել:*

# 75. Կաքավի երգը




*Արև բայվեյ թուխ ամպերեն,*
*Կաքավ թըռավ կանաչ սարեն,*
*Կանաչ սարեն՝ սարի ծերեն,*
*Բարև բերավ ծաղիկներեն:*
*Միրունիկ, միրունիկ,*
*Միրունիկ, նախշուն կաքավիկ:*

*Քո բուն հյուսած ծաղիկներով*
*Շուշան, նարգիզ, նունուֆարով:*
*Քո տեղ լըցված յող ու շաղով,*
*Քընես-կելնես երգ ու տաղով:*

*Քո թև փափուկ ու խատուտիկ*
*Պըստի կըտուց, կարմիր տոտիկ,*
*Կարմիր-կարմիր տոտիկներով*
*Կըշորորաս ճուտիկներով:*

*Երբ կըկանգնես մամռոտ քարին,*
*Սաղմոս կասես ծաղիկներին,*
*Սարեր, ձորեր պըվարթ կանես,*
*Դարդի ծովեն սիրտ կըհանես:*

# 76. Ավետիս




*Ձեր սընդուկներ լեցվին հացով, ավետիս,*

*Ձեր ոչխարներ գային ջոկով, ավետիս,*

*Ձեր կարասնին լեցվին գինով, ավետիս,*

*Ձեր քոսոնին գային ջոկով, ավետիս,*

*Ձեր խորովնին կանչեն ձենով, ավետիս,*

*Ձեր ճուկն ու թաս երթան ու գան, ավետիս,*

*Ծառ խընկենի, արմավենի, ավետիս,*

*Ձեր մանչերուն Աստված օրհնե, ավետիս:*

# 77. Ա՛յ ինդիլո




*Այ ինդիլո, ինդիլո,*
*Ես ձորն ի վեր ծընեբակ,*
*Շաքարով անուշ դիլո,*
*Դու նըմանիս արեգակ,*
*Այ ինդիլո, ինդիլո,*
*Արեգակը դուս գալուս,*
*Շաքարով անուշ դիլո,*
*Մեկտեղ զընանք դարիդուս,*
*Այ ինդիլո, ինդիլո,*
*Արեգակի թև ախպեր,*
*Շաքարով անուշ դիլո,*
*Շաքար մաղեմ՝ կեր, ախպեր,*
*Այ ինդիլո, ինդիլո,*
*Շաքարը մաղած պիտի,*
*Շաքարով անուշ դիլո,*
*Ղանդով շաղախած պիտի:*

# 78. Խընոցու երգ




*Հարի՛, հարի՛ խընոցի,*
*Մեջըդ բարի, խընոցի.*
*Ունկըդ բարակ, խընոցի,*
*Մեջըդ կարագ, խընոցի:*
*Փլավ կեփեմ՝ եղ չըկա,*
*Փեսեն էկավ՝ տեղ չըկա՛,*
*Հարի՛, հարի՛ խընոցի,*
*Բերքըդ բարի, խընոցի:*

# 79. Ճախրակի երգ




*Հոպ, մարալ, հոպ, մարալ,*
*Հոպ, մարալ ջան,*
*Ճախրակի ոտը փուշ ի.*
*Հոպ, մարալ, հոպ, մարալ,*
*Հոպ, մարալ ջան,*
*Ճախրակ մանողը դուշ ի:*
*Ճախրակի ոտը ուռ ի,*
*Ճախրակ մանողը ծուռ ի:*
*Ճախրակի ոտը տանձ ի,*
*Ճախրակ մանող կուտան ձի:*
*Ճախրակի ոտը նուշ ի,*
*Ճախրակ մանողն անուշ ի:*

# 80. Ավետիս




*Այսօր տոն է սուրբ ծընընդյան, ավետիս,*
*Ձեր սընդուկներ լեցվին հացով, ավետիս,*
*Ձեր ոչխարներ գային ջոկով, ավետիս,*
*Ձեր կարասնին լեցվին գինով, ավետիս,*
*Ձեր քոցոնին գային ջոկով, ավետիս,*
*Ձեր խորոցնին կանչեն ձենով, ավետիս,*
*Ձեր ճուկն ու թաս երթան ու գան, ավետիս,*
*Ծառ խընկենի, արմավենի, ավետիս,*
*Ձեր մանչերուն Աստված օրհնե, ավետիս:*

# 81. Ճախրակ մանող




*Ուտանա բարձրիկ սարեր,*
*Չեմ կանա ճախրակ մանե,*
*Ճախրակի ոտ գյո ուռ ի,*
*Ճախրակ մանող գյո ծուռ ի:*

*Ճախրակի ոտ գյո բարդ ի,*
*Ճախրակ մանող նամարդ ի,*
*Ճախրակի ոտ գյո թուշ ի,*
*Ճախրակ մանող փըմփուշ ի:*

*Ճախրակի ոտ գյո տանձ ի,*
*Ճախրակ մանող կուտան ձի:*
*Ճախրակի ոտ գյո նուշ ի,*
*Ճախրակ մանող անուշ ի:*

# 82. Վիճակի երգ

*Չափավոր և ուրախ*




*Մանի ասեմ ու շարեմ,*
*Ջան ծաղիկ, ջան, ջան,*
*Լըցնեմ տոպրակ ու կարեմ,*
*Ջան, վիճակ, ջան, ջան:*

*Ես աղջիկ եմ, ալ կուշեմ,*
*Ջան ծաղիկ, ջան, ջան,*
*Ոսկին ծալեծալ կուշեմ,*
*Ջան, վիճակ, ջան, ջան:*

*Ծաղիկ ունեմ նարընջի,*
*Ջան ծաղիկ, ջան, ջան,*
*Տըղա վեր արի փընջի,*
*Ջան, վիճակ, ջան, ջան:*

*Ծաղիկ ունեմ՝ ալա յա,*
*Ջան ծաղիկ, ջան, ջան,*
*Ալա չի, ալվալա յա,*
*Ջան, վիճակ, ջան, ջան:*

*Արնը կամար-կամար,*
*Ջան ծաղիկ, ջան, ջան,*
*Կապել ես ոսկե քամար,*
*Ջան, վիճակ, ջան, ջան:*

*Սարեն կըգա ձիավոր*
*Ջան ծաղիկ, ջան, ջան,*
*Մեր տունը չարդախավոր,*
*Ջան, վիճակ, ջան, ջան:*

*Հըրես եկավ իմ աղբեր,*
*Ջան ծաղիկ, ջան, ջան,*
*Երեք օրվա թագավոր,*
*Ջան, վիճակ, ջան, ջան:*

# 83. Լորիկ




*Առավոտյան փչեց հով,*
*Արտը ծփաց դարձավ ծով,*
*Արտի միջից թռավ լոր,*
*Թռավ, ընկավ սար ու ձոր:*
*Այ լորիկ, ջան, լորիկ,*
*Կլորիկ ու թմբլիկ:*
*Լորիկ, լորիկ, այս տարի*
*Արտըս ցանել եմ գարի,*
*Ուր որ գընաս՝ շուտ արի,*
*Արտիս միջին ծվարի:*
*Այ լորիկ, ջան, լորիկ,*
*Կլորիկ ու թմբլիկ:*

# 84. Նա լուս էր, ինչ լուս էլավ




- Նա լուս էր, ինչ լուս ելավ, տեսեք ան ի՞նչ ի.

- Նա լուս էր, ինչ լուս ելավ՝ երեցկըտիքն ի:

- Նա ջուխտակ աստըղը կըշտին, տեսեք ան ի՞նչ ի.

- Նա ջուխտակ աստըղը կըշտին՝ սարկավայքերն ի:

- Նա թոնիր, ինչ թուս ու մուխ, տեսեք ան ի՞նչ ի.

- Նա թոնիր, ինչ թուս ու մուխ՝ ան տանուտերն ի:

# 85. Էն դիկան




*Էն դիկան, բետ-բետ դիկան, տեսեք էն ո՞րն է:*
*Էն դիկան, բետ-բետ դիկան՝ գեղի ռեսներն է:*

*Ճընճըղներ ճըլվըլալեն, տեսեք էն ո՞րն է:*
*Ճընճըղներ ճըլվըլալեն՝ էն տիրացուքն է:*

*Էն լուսին ամպերի մեջ, տեսեք էն ո՞րն է:*
*Էն լուսին ամպերի մեջ՝ մեր թագուհին է:*

*Ցախավել խըև դըռան, տեսեք էն ո՞րն է:*
*Ցախավել խըև դըռան՝ էն մշակներն են:*

*Շունն եկավ պարկն ի բերան, տեսեք էն ո՞րն է:*
*Շունն եկավ պարկն ի բերան՝ գեղի գըզիրն է:*

*Մուկն եկավ ալըրաթաթախ, տեսեք էն ո՞րն է:*
*Մուկն եկավ ալըրաթաթախ՝ էն ջաղացպանն է:*

# 86. Աղջկեր, պար բռնեցեք



Տղաներ *Աղջըկեք, պար բըռնեցեք,*
*Արմիկի երես գովեցեք,*
*Այ երես, շարմաղ երես,*
*Դու մեզ չըթողնես սևերես:*

Աղջիկներ *Բարձըր սարեն պաղ ջուր կուգա,*
*Արմիկի երես կըլըվա,*
*Այ երես, արև երես,*
*Քո շաղափով մերտ սիրտ կէրես:*

Տղաներ *Աղջըկեք, պար բըռնեցեք,*
*Արմիկի աչեր գովեցեք,*
*Այ աչեր, սիրուն աչեր,*
*Արևի պես ձայլուն աչեր:*

Աղջիկներ *Արմիկի աչքերն արեգակ,*
*Մեզի կուտա լույս ու կըրակ,*
*Այ աչքեր, վառ-վառ աչքեր,*
*Մանուշակի թառ-թառ աչքեր:*

Տղաներ *Աղջըկեք, պար բըռնեցեք,*
*Արմիկի կըռներ գովեցեք,*
*Այ կըռներ, ուժեղ կըռներ,*
*Դուք կըշարժեք մեծ-մեծ լեռներ:*

Աղջիկներ *Արմիկի կըռներն է գերան,*
*Կըպատռի վագրի բերան,*
*Այ կըռներ, գըյթուռ կըռներ,*
*Դուք կըբանաք մեր փակ դըռներ:*

Տղաներ *Աղջըկեք, պար բըռնեցեք,*
*Արմիկի հասակ գովեցեք,*
*Այ հասակ, բարձըր հասակ,*
*Քեզ կըվայելե դափնյա պսակ:*

Աղջիկներ *Արմիկի հասակն է տափ,*
*Շուքը մեզնից չըպակսի,*
*Այ հասակ, չինար հասակ,*
*Ո՞վ չի տար քեզ դափնյա պսակ:*

Միասին ու թռչկոտելով *Ո՞վ պատռեց վագրի բերան,*
*Արմիկ պատռեց վագրի բերան*
*Վագրի բերան՝ ահա այսքան,*
*Ժանիքները մեկ-մեկ գերան...*
*Ապրի Արմիկ, ապրի շատ օր,*
*Իր թըշնամին ընկընի գըլոր...*

# 87. Աղջիկ, աղջիկ, Հերիքնազ




*Աղջիկ, աղջիկ, Հերիքնազ,*
*Եկ մեր բախչեն, ածե սազ,*
*Մենք բոլորս կանենք տազ,*
*Որ քեկանով անենք հազ:*

*Բարդի ծառին բար չիլնի,*
*Տակը քար ա, փարդ չիլնի,*
*Միրտը որ կա՝ շուշա յա,*
*Որ կոտրեց, էլ ճար չիլնի:*

*Հեն սարեն մարդ ա գալի,*
*Սարը կըրակ ա տալի.*
*Առաջս աղլուխ բացավ,*
*Իմացա՝ փարդ ա տալի:*

*Տանըս տակին շըլորի,*
*Ճըղները ետ կոլորի,*
*Էրնեկ էն քըվորը, որ*
*Յոթն աղբոր թագ կոլորի:*

# 88. Բատըլա ջան




*Տանձի ծառը բարձըր ա,*
*Բատըլա ջան, բատըլա,*
*Վըրի տանձը քաղցըր ա,*
*Բատըլա ջան, բատըլա,*
*Գընանք՝ պապին հարցընենք,*
*Բատըլա ջան, բատըլա,*
*Թե որ չըտա, փախցընենք,*
*Բատըլա ջան, բատըլա:*

*Այ օրոն, օրոն ծաղիկ,*
*Կարմիր ու տորոն ծաղիկ,*
*Գոգնոցի բոլորն օ՛յ ա,*
*Բոյը չինարի բոյ ա:*

*Բալի ծառը ցածըր ա,*
*Վըրի բալը համեղ ա,*
*Գընանք նանին հարցընենք,*
*Թե որ չըտա, փախցընենք:*

# 89. Սաթոյին գովելու համար ենք եկել




*Ողջի, ինչ լավ նազ ունիս,*
*Սաթոյին գովելու համար ենք եկել,*
*Չորեք դիմաց մազ ունիս,*
*Սաթոյին տանելու համար ենք եկել,*
*Խունջիկ-մունջիկ մի անի,*
*Սաթոյին գովելու համար ենք եկել*
*Մեր տուն գալու կամ ունիս,*
*Սաթոյին տանելու համար ենք եկել:*

*Սարի ետև տուն ունիմ,*
*Մեջը ոսկի տուն ունիմ:*

*Աչքերըդ անգին քար են,*
*Ունքերըդ մարդ կըվառեն,*
*Բարակ, նազուկ մատներըդ*
*Իստակ սիպտակ մարմար են:*

# 90. Էն դիպան

*Աշխույժ, աստիճանաբար արագացնելով*




*Էն դիպան, բետ-բետ դիպան, տեսեք էն ո՞րն է:*

*Էն դիպան, բետ-բետ դիպան, տեսեք էն ո՞րն է:*

*Էն դիպան, բետ-բետ դիպան՝ գեղի ռեսներն է:*

*Ճընճըղներ ճըլվըլալեն, տեսեք էն ո՞րն է:*

*Ճընճըղներ ճըլվըլալեն, տեսեք էն ո՞րն է:*

*Ճընճըղներ ճըլվըլալեն՝ էն տիրացուքն է:*

*Էն արև, երկունց արև, տեսեք էն ո՞րն է:*

*Էն արև, երկունց արև, տեսեք էն ո՞րն է:*

*Էն արև, երկունց արև՝ մեր թագավորն է:*

*Էն լուսին ամպերի մեջ, տեսեք էն ո՞րն է:*

*Էն լուսին ամպերի մեջ, տեսեք էն ո՞րն է:*

*Էն լուսին ամպերի մեջ՝ մեր թագուհին է:*

# 91. Փափուրի

*Փոքր ինչ աշխույժ*




*Դժվարության դեպքում երգել 4-րդ տակտը  իսկ 5-րդը*





*Ա՜խ,*
*Փափուրի ջան,*
*Մըտա բըլբուլի բաղը,*
*Փափուրի ջան,*
*Երգեցի անուշ տաղը:*

*Լուսնակը շող ա գըցել,*
*Իմ քուր քող ա գըցել:*
*Փափուրի ջան,*
*Մըտա բըլբուլի բաղը,*
*Փափուրի ջան,*
*Երգեցի անուշ տաղը:*

*Բարակ քամին տալիս ա,*
*Ալ քողը դող ա գըցել:*
*Փափուրի ջան,*
*Մըտա բըլբուլի բաղը,*
*Փափուրի ջան,*
*Երգեցի անուշ տաղը:*

*Ծամեր ունիս ծիրանի,*
*Քամին տա՝ թել-թել անի:*

# 92. Երի, երի ջան




*Էս գիշեր լուսը տեսա,*

*Երի, երի, երի ջան,*

*Իմ քուրը դուսը տեսա,*

*Երի, երի, երի ջան,*

*Ելել էր, ուխտ էր գալի,*

*Երի, երի, երի ջան,*

*Հրայանը ուսին տեսա,*

*Երի, երի, երի ջան:*

*Արև էր ամպի տակին,*

*Սուրբ Հակոբ ճամփի տակին,*

*Մի էնպես ախպեր ունեմ,*

*Հրեղեն ձին թամբի տակին:*

# 93. Ջաղչի դռնով ես անցա




*Ջաղչի դըռնով ես անցա,*
*Նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ,*
*Անձրև պարկեց, ես թրջա,*
*Նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ,*
*Անձրև պարկեց, ես թրջա,*
*Նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ,*
*Արև պարկեց, ես չորցա,*
*Նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ,*
*Արև պարկեց, ես չորցա,*
*Նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ,*
*Քանց կարմիր վարդ, ես բացվա,*
*Նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ:*

# 94. Կոտ ու կոտ


Փոքր ինչ թեթև
Կոտ ու կես կո - րեկ ու - նեմ ցա - նե -
լու հա - մար, ճընճ - ղուկ - ներ թը - ռան է - կան ու - տե -
լու հա - մար, կը - ռա - ցա, քար վեր ա - ռա ցար - կե -
լու հա - մար: Այ ճընճ - ղու - կիկ, կար - միր տո - տիկ,
սիպ - տակ փո - րիկ, ու - տեն կու - տիկ, խը - մեն ջը - րիկ,
առ - վի եզ - րիկ, պըս - տիկ մըս - տիկ, փախ - չեն,
եր - թան ման գա - լու հա - մար:

Կոտ ու կես կորեկ ունեմ ցանելու համար,
Ճընճղուկներ թըռան էկան ուտելու համար,
Կռացա, քար վեր առա պարկելու համար,
Թռան, գացին բերդի տանիս գանգտելու համար,
Ղասաբներ ժողվան էկան դեղմաշկի համար,
Երեցներ[1] ժողվան էկան օրհնելու համար,
Ըռեսներ[2] ժողվան էկան խորվածի համար,
Գուսաններ ժողվան էկան գովելու համար,
Ակաբներ ժողվան էկան թամաշի համար.
Այ ճընճղուկիկ,
Կարմիր տոտիկ,
Սիպտակ փորիկ,
Ուտեն կըտիկ,
Խըմեն ջըրիկ,
Առվի եզրիկ,
Պըստիկ-մըստիկ,
Փախչեն, էրթան
Ման գալու համար:

Կոտ ու կես գարի ունեմ ցանելու համար,
Տունը մեկ արոր[3] տըրվեք վարելու համար,
Տունը մեկ մըշակ[4] տըրվեք ցանելու համար,
Տունը մեկ ջըրկալ[5] տըրվեք ջըրելու համար,
Տունը մեկ մանգաղ տըրվեք քաղելու համար,
Տունը մեկ հընձվոր տըրվեք հընձելու համար,
Տունը մեկ մըշակ տըրվեք կապելու համար,
Տունը մեկ մըշակ տըրվեք բարդելու համար,
Տունը մեկ հաչակ[6] տըրվեք դիզելու համար,
Տունը մեկ սելվոր տըրվեք կըրելու համար,
Ճընճուղներ չըլնի ցըրվեն ուտելու համար:
Այ ճընճղուկիկ,
Կարմիր տոտիկ,
Սիպտակ փորիկ,
Ուտեն կըտիկ,
Խըմեն ջըրիկ,
Առվի եզրիկ,
Պըստիկ-մըստիկ,
Փախչեն, էրթան
Ման գալու համար:

Կոտ ու կես գարի ունեմ ցանելու համար,
Տունն երկու ջարջառ[7] տըրվեք ծեծելու համար,
Տունն երկու եզը տըրվեք լըծելու համար,
Տունն երկու մաղ ժողվեցեք մաղելու համար,
Տունն երկու մարդ ժողվեցեք չափելու համար,
Տունն երկու ջաղաց տըրվեք աղալու համար,
Տունն երկու տաշտ ժողվեցեք խմորի համար,
Տունն երկու կընիկ տըրվեք հունցելու համար,
Տունն երկու թոնիր տըրվեք թըխելու համար,
Տունն երկու մարդ ժողվեցեք ուտելու համար,
Ճընճուղներ չըլնի ժողվեն ուտելու համար:
Այ ճընճղուկիկ,
Կարմիր տոտիկ,
Սիպտակ փորիկ,
Ուտեն կըտիկ,
Խըմեն ջըրիկ,
Առվի եզրիկ,
Պըստիկ-մըստիկ,
Փախչեն, էրթան
Ման գալու համար:

---

1. երեցներ - քահանաներ
2. ըռեսներ - գյուղապետեր
3. արոր - հողը վարելու գործիք
4. մըշակ - հողի աշխատավոր
5. Ջըրկալ - Ջրվոր
6. հաչակ - եղանատիպ երկճյուղ փայտ, հենակ
7. ջարջառ - կալսելու գործիք

# 95. Էս առուն




*Էս առուն ջուր է գալի.*
*Մի տեսեք - ո՛ր է գալի.*
*Գալիս է, գալիս է*
*Սեր անե:*
*Քենին մահանա արել,*
*Իմ յարին հյուր է գալի.*
*Գալիս է, գալիս է*
*Սեր անե:*
*Վարդ եմ քաղել մաղերով,*
*Վեր եմ դըրել շաղերով.*
*Արի, իմ սիրեկան քուր,*
*Առաջ գամ քեզ տաղերով:*
*Տանըս տակին կա նըռնի,*
*Ես բարձ բերեմ՝ դու կըռնի,*
*Ես, դու մի բաղում պիտենք,*
*Դու՝ չինարի, ես՝ նըռնի:*

# 96. Հո՜յ, Նազան




*Հո՜յ, Նազան իմ, Նազան իմ,*
*Ջա՜ն, Նազան իմ, Նազան իմ,*
*Նազան, դու բարով եկար,*
*Կանաչ սարերով եկար,*
*Խոր-խոր ձորերով եկար:*

*Գարնան սիրուն ծաղիկ ես,*
*Հո՜յ, Նազան իմ, Նազան իմ,*
*Ինձ համար աղունիկ ես,*
*Ջա՜ն, Նազան իմ, Նազան իմ,*
*Գլխիս վրով պըտիտ տուր,*
*Հո՜յ, Նազան իմ, Նազան իմ,*
*Նախշուն թև թիթեռնիկ ես,*
*Ջա՜ն, Նազան իմ, Նազան իմ,*
*Յար ջան դու բարով եկար,*
*Կանաչ սարերով եկար,*
*Խոր-խոր ձորերով եկար:*

*Ճամփա տվեք՝ առաջ գամ,*
*Միրած յարիս բարև տամ,*
*Ուխտ եմ արել, որ առնեմ,*
*Թող տեսնի աշխարհ ալամ:*

*Սարեր, ձորեր, ետ կացեք,*
*Իմ յարի ճամփեն բացեք,*
*Յար յարի հետ խոսելիս*
*Ականջ արեք, իմացեք:*

*Նըշի ծառին նուշ կըլնի,*
*Վարդի հոտն անուշ կըլնի,*
*Երանեկ էն աղջկան՝*
*Միրած յարին թուշ կըլնի:*

# 97. Երևան բաղ եմ արել

*Աշխույժ, կայտառ*




*Երևան բաղ եմ արել,*
*Այ արև, արև աղբերըս,*
*Հոգիս մատաղ եմ արել,*
*Ջան, բարև, բարև աղբերըս:*

*Տուն արի, տուն արի, տուն, աղբեր,*
*Արի, իմ խորոտ աղբեր:*

*Էլի բարեկամի մոտ,*
*Այ արև, արև աղբերըս,*
*Լացըս ծիծաղ եմ արել,*
*Ջան, բարև, բարև աղբերըս:*

*Տուն արի, տուն արի, տուն, աղբեր,*
*Արի, իմ խորոտ աղբեր:*

# 98. Սոնա յար




*Սոնա յար, Սոնա յար,*
*Սոնա սիրուն, Սոնա յար:*

Տղա *Վարդավառը գալիս ա,*
*Սոնա յար, Սոնա յար,*
*Ծաղիկը ցընծալիս ա.*
*Սոնա սիրուն, Սոնա յար:*

*Այ գյուղում կանչող աղջիկ,*
*Սոնա յար, Սոնա յար,*
*Ձենըդ ծըլվըլալիս ա,*
*Սոնա սիրուն, Սոնա յար:*

Աղջիկ *Կանաչ տեղը՝ բաղում եմ,*
*Պարի միջին խաղում եմ,*
*Կաքավի պես տրալով*
*Տըղաներին դաղում եմ:*

Տղա *Կարմիր գինին թասումը,*
*Ես եմ քո հավատումը,*
*Երբ կըտաքնան աղջըկեք.*
*Վարդավառի պատումը:*

Աղջիկ *Հայ ասի նա, ասի նա,*
*Կարմիր գինին թասին ա,*
*Տըղեք երբ կըկռտորվին,*
*Հորթայթողի պասին ա:*

Տղա *Սիրուն աղջիկ, նազ ունիս,*
*Շահ պաղայի սազ ունիս.*
*Հողեմ շահպաղի գըլուխը,*
*Դու իմ հոգում հազ ունիս:*

# 99. Արևվը կայնե կեսօր




*Արևը կայնե կեսօր,*
*Դե՛, քելե, դե՛ քելե, յա՛րո ջան,*
*Իմ յարը կուգա էսօր,*
*Դե՛, քելե, դե՛ քելե, յա՛րո ջան,*
*Իմ յարի գալած ճամբեն,*
*Դե՛, քելե, դե՛ քելե, յա՛րո ջան,*
*Կըյանեմ կարմիր մաստր,*
*Դե՛, քելե, դե՛ քելե, յա՛րո ջան,*

*Ջա՜ն յարո, բարով եկար,*
*Ո՞ր արտով, քարով եկար,*
*Ես մեկ օր չէի տեսել,*
*Ա՜խ, կարծես տարով չեկար:*

*Մեր բաղում կա չինարի,*
*Ե՛կ, երթանք, ինձ հետ արի՛,*
*Դու՝ տխակ, ես՝ փարդենի,*
*Տա՛ղ տաս, թփին թառի:*

# 100. Ահա ծագեց կարմիր արև




*Ահա ծագեց կարմիր արև,*
*Տաք ու պայծառ է օրը,*
*Դե՛հ, քաշեցե՛ք, սիրո՛ւն եզներ,*
*Առա՛ջ տարեք արորը:*

*Վարը վարենք, ակոս փորենք,*
*Խոր ակոսներ հողի մեջ,*
*Սերմը ցանենք, որ հունձ հընձենք,*
*Ցորեն դիզենք կալի մեջ:*

*Կըգա ձմեռ՝ մենք վախ չունինք,*
*Ուրախ կանցնի մեր օրը,*
*Ուտելու միշտ պաշար ունինք,*
*Լի ու կուշտ է մեր փորը:*

*Թող չասին մեր դրացիքը՝*
*Ծույլ են Հասոյի եզները.*
*Դե՛հ, քաշեցե՛ք, սիրո՛ւն եզներ,*
*Շուտով վարենք արտերը:*

# 101. Զար, զընգա






Զար, կընգը, կար, կընգը, թող կընգա,

Պարենք գիշեր լուսընկա:

Էս գիշեր՝ լուսնակ գիշեր,

Զար, կընգը, կար, կընգը, թող կընգա,

Ձուն էկերէ գետին նախշեր,

Զար, կընգը, կար, կընգը, թող կընգա,

Էլի պարը բոլորավ,

Զար, կընգը, կար, կընգը, թող կընգա,

Քուրըս միջին մոլորավ,

Պարենք գիշեր լուսընկա:

Զար, կընգը, կար, կընգը, թող կընգա,

Պարենք գիշեր լուսընկա:

# 102. Անձրևն եկավ

*Փոքր ինչ աշխույժ սիրալիր*




*Անձրևն եկավ շաղալեն,*
*Ուռու տերև դողալեն.*
*Վա՜յ, լե, լե, լե,*
*լե, լե, լե, լե*
*լե, լե, լե:*
*Խալիչեքը փըռել եմ,*
*Նախշուն բարձեր դըրել եմ.*
*Թառլան ջան, քեզ ուտելու*
*Սեր ու կարագ հայրել եմ:*

*Տապկած հավի ճուտ բերեմ,*
*Ոչխարի մածուն մերեմ,*
*Որ գիտենաս, անուշ ջան,*
*Թե քեզ սրտով կըսիրեմ:*

*Ղուշ մի դառնա թևավոր,*
*Դու խաղ կանչի ձևավոր.*
*Յարաբ, կըլնի՞ էն օրը,*
*Որ գաս մեր տուն թագավոր:*

# 103. Սանդի երգ






*Ո՛ւ, խանե, ո՛ւ, խանե, ո՛ւ, խանե, ո՛ւ, խանե,*
*Ո՛ւ, խիյո, ո՛ւ, խիյո, ո՛ւ, խիյո, ո՛ւ, խիյո:*
*Սանդ կըծեծիմ գարի, յորեն,*
*Կեսուր, կեսրար մեկտեղ ուտեն:*
*Խանե, խանե, խիյո, խիյո,*
*Խանե, խանե, խիյո, խիյո,*
*Խանե, խանե, խիյո, խիյո:*
*Խանե, խանե, խանե, խի,*
*Խիյո, խիյո, խիյո, խի,*
*Խանե, խանե, խանե, խի,*
*Խիյո, խիյո, խիյո, խի,*
*Ուշը, ուշը, ուշը:*
*Սանդիկ ուռ էր, սանդիկ ուռ էր,*
*Սանդի ծեծող քիչըմ ծուռ էր:*
*Սանդն է հնոցի, ծեծող՝ ջնոցի,*
*Սանդն է կախմախ, ծեծող՝ չախմախ:*
*Մեռնիմ թեփին, թե՝ տու քարին,*
*Բերն ու բարին վեր մեր թաղին,*
*Քարն ու քոեն ներքի թաղին:*

# 104. Գայեք տեսեք




*Գայեք տեսեք՝ ի՞նչն ա կերել թուփը:*
*Գային տեսան՝ էծն ա կերել թուփը:*
*Էծ վըր թըփուն,*
*Թուփ վըր իգուն[1],*
*Իգ Վարագա,*
*Տակն ա կուգա,*
*Վըրես կուգա,*
*Հալալ է՝*
*Ջալալ է:*
*Էս ինչ բարի տարի էր էկավ,*
*Գո վեր մե[2], հա՜յ, գո վեր մե:*

---

1. Իգուն - այգուն, իգ - այգի:
2. Գո վեր մե - աՀա մեր վրա:

*Գայեք տեսեք՝ ի՞նչն ա կերել էծը:*
*Գային տեսան՝ գելն ա կերել էծը:*
*Գել վըր էծին,*
*Էծ վըր թըփին,*
*Թուփ վըր իգուն,*
*Իգ Վարագա,*
*Տակն ա կուգա,*
*Վըրես կուգա,*
*Հալալ է՝*
*Ջալալ է:*
*Էս ինչ բարի տարի էր էկավ,*
*Գո վեր մե, հա՜յ, գո վեր մե:*

*Գայեք տեսեք՝ ի՞նչն ա կերել գելը:*
*Գային տեսան՝ արջն ա կերել գելը:*
*Արջ վըր գելուն,*
*Գել վըր էծին...*

*Գայեք տեսեք՝ ի՞նչն ա կերել արջը:*
*Գային տեսան՝ թուրն ա կերել գելը:*
*Թուր վըր արջին,*
*Արջ վըր գելուն,*
*Գել վըր էծին...*

*Գայեք տեսեք՝ ի՞նչն ա կերել թուրը:*
*Գային տեսան՝ ժանգն ա կերել թուրը:*
*Ժանգ վըր թըրին,*
*Թուր վըր արջին...*

*Գայեք տեսեք՝ ի՞նչն ա կերել ժանգը:*
*Գային տեսան՝ յուղն ա կերել ժանգը:*
*Յուղ վըր ժանգին,*
*Ժանգ վըր թըրին,*
*Թուր վըր արջին...*

*Գայեք տեսեք՝ ի՞նչն ա կերել յուղը:*
*Գային տեսան՝ մուկն ա կերել յուղը:*
*Մուկ վըր յուղին,*
*Յուղ վըր ժանգին,*
*Ժանգ վըր թըրին...*

*Գայեք տեսեք՝ ի՞նչն ա կերել մուկը:*
*Գային տեսան՝ կատուն ա կերել մուկը:*
*Կատուն՝ մըկան,*
*Մուկ վըր յուղին,*
*Յուղ վըր ժանգին...*

*Գայեք տեսեք՝ ի՞նչն ա կերել կատուն:*
*Գային տեսան՝ հարսն ա կերել կատուն:*
*Հարս վըր կատվին,*
*Կատուն՝ մըկան,*
*Մուկ վըր յուղին...*

*Գայեք տեսեք՝ ի՞նչն ա կերել հարսը:*
*Գային տեսան՝ փեսեն ա կերել հարսը:*
*Փեսեն վըր հարսին,*
*Հարս վըր կատվին,*
*Կատուն՝ մըկան,*
*Մուկ վըր յուղին,*
*Յուղ վըր ժանգին,*
*Ժանգ վըր թըրին,*
*Թուր վըր արջին,*
*Արջ վըր գելուն,*
*Գել վըր էծին,*
*Էծ վըր թըփին,*
*Թուփ վըր իգուն,*
*Իգ Վարագա,*
*Տակն ա կուգա,*
*Վըրես կուգա,*
*Հալալ է՝*
*Ջալալ է:*
*Էս ինչ բարի տարի էր էկավ,*
*Գո վեր մե, հա՜յ, գո վեր մե:*